

ՄԵՐ ԱՆԿԻԻՆԵՆ

Ապրիլեան Պատերազմի Հետքերով

Հայաստանի Ազգային ժողովին կողմէ կազմուած խորհրդարանական յանձնաժողովը սկսաւ ուսումնասիրել Ապրիլեան քառօրեայ պատերազմի հանգամանքները, պատասխանելու համար այն բոլոր հարցերուն, որոնք անցնող երեք տարիներուն մնացին չլուսաբանուած:

2016-ի Ապրիլ 2-ին, Ատրպէյճանական բանակը անակնկալ յարձակում գործեց դարաբաղեան ճակատներուն վրայ ու յաջողեցաւ արձանագրել որոշ յառաջխաղացք: Պատերազմի յաջորդ օրերուն Հայկական զօրքերը մախաձեռնութիւնը վերցնելով իրենց կողմը, կարողացան ետ մղել թշնամի զօրքերը: Պատերազմը ավարտեցաւ Ապրիլ 6-ին, երբ երկու երկիրներու բանակի իրամանատարներու մասնակցութեամբ, Մոսկուայի մէջ գոյացաւ զինադադարի համաձայնութիւն:

Պատերազմի ընթացքին Հայկական կողմը տուաւ անելի բան հարիւր զոհ: Ձիւնադադարի հաստատումէն ետք, գործող մախազահ Սերժ Սարգսեան յայտարարեց, որ 800 հեքթար հողատարածք անցած է Ատրպէյճանի հսկողութեան տակ: Այս առթիւ ան նաեւ կատարեց բաւական զարմանալի յայտարարութիւն մը թէ, Հայկական զօրքերը կռուելով հանդերձ 80-ական թուականներու զենքերով յաջողեցան կասեցնել թշնամիի յառաջխաղացքը:

Պատերազմին յաջորդող օրերուն եւ շաբաթներուն եղան այլազան հրապարակումներ այն մասին, որ յարձակման առաջին ժամերուն հայ զինուորներուն հրաման չէ տրուած կրակելու յառաջացող զօրքերուն վրայ, հայկական շատ մը զրահամեքենաներու մէջ չէ եղած վառելիք, առաջին զիծի վրայ կանգնած զինուորները չեն ունեցած բաւարար քանակի փամփուշտ եւ այլն: Այս բոլոր հարցերը մնացին, ինչպէս սովոր են ըսել Հայաստանցիք՝ «օդին մէջ կախուած»: Թէ ինչն է, հայկական բանակը պիտի կռուէր 80-ականի զենքերով, այդ հարցը եւս մնաց անպատասխան:

Նախկին իշխանութիւնները հրապարակային ոչ մէկ բացատրութիւն տուին կասկածներ յառաջացնող այս հարցերուն, իսկ այժմ որ, նոր իշխանութիւնները քայլեր կը ձեռնարկեն այդ ուղղութեամբ, բողոքի ձայներ կը բարձրանան ՀՀ-ի, քոչարեանականներու եւ Վազգէն Մանուկեաններու կողմէ, առարկելով թէ, նման ուսումնասիրութիւններ թշնամիի ջաղացքին ջուր պիտի լեցնեն: Սակայն, ինքզինք յարգող որեւէ պետութիւն ու կառավարութիւն, պատերազմի ավարտէն անմիջապէս ետք պէտք էր կատարած ըլլար նման ուսումնասիրութիւն, գնահատական տուած ըլլար ու յանձնարարական-

Ապրիլեան Պատերազմի Հանգամանքները Ուսումնասիրող Խորհրդարանական Յանձնաժողովը Սկսաւ Իր Գործունէութեան

Հայաստանի Ազգային ժողովէն ներս իր աշխատանքները սկսաւ 2016 թուականի Ապրիլեան քառօրեայ՝ պատերազմի հանգամանքները ուսումնասիրող յանձնաժողովը՝ նախագահութեամբ պաշտպանութեան նախկին փոխնախարար, «Իմ քայլը» դաշինքի պատգամաւոր Անդրանիկ Քոչարեանի: **Յունիս 4-ին կայացաւ Յանձնաժողովի առաջին դռնփակ նիստը, որու աւարտին Անդրանիկ Քոչարեան լրագրողներուն փոխանցեց որոշ տեղեկութիւններ, իրենց գործունէութեան մասին: Ան յայտնեց որ, արդէն իսկ կայ նախնական պատկերացում, թէ որոնք պէտք է հրաւիրուին մասնակցելու լսումներուն, բայց առայժմ անուններ պիտի չուզեն տալ:**

Այն հարցին թէ, այդ օրերուն պաշտպանութեան նախարարի պաշտօնը վարած Մէլքոն Օհանեան եւ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսեանը պիտի հրաւիրուին, Անդրանիկ Քոչարեանը ըսաւ. «Մենք



Ապրիլեան պատերազմի հանգամանքները ուսումնասիրող յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան

կանչելու ենք բոլոր նրանց, ովքեր կարող են յանձնաժողովի աշխատանքին տալ տեղեկատուութիւն: Համոզուած եմ՝ իրաւական առու-

մով գուցէ շատերը կարող են օգտուել իրենց իրաւունքից եւ ասել՝ չեմ գալիս, բայց բարոյական տեսանկիւնից որեւէ մէկն իրաւունք չունի, եթէ կայ հարց, չըջանցի այդ հարցի վերաբերեալ ունեցած իր տեղեկատուութիւնը փոխանցել յանձնաժողովին», - ըսաւ ան:

Քոչարեանի խօսքով՝ այս պահին դեռ յանձնաժողովը վերջնական որոշում չունի, թէ առաջինը որուն պիտի հրաւիրէ: Ան յոյս չայտնեց, որ յաջորդ նիստին այս հարցով վերջնական որոշում պիտի կայացուի: Ըստ Քոչարեանի՝ պիտի հրաւիրուին նաեւ Արցախէն պաշտօնեաներ: «Կը լինեն բոլոր այն օղակներից, որտեղ պաշտօնատար անձն ասելիք կ'ունենայ յանձնաժողովին», - ըսաւ ան:

Անդրանիկ Քոչարեան յայտնեց, որ ինք տեղեկ է, որ Մէլքոն Օհանեան յայտարարած էր, որ ինք արդէն ուսումնասիրած է Ապրիլ-

Նախարար Յակոբ Արշակեան Այցելեց Լոս Անճելոս



Նախարար Յակոբ Արշակեան ելոյթ կ'ունենայ «Հիլթըն» հիւրանոցէն ներս. Նստած աւագ հիւպատոս Արմէն Բայբուրդեան

Շաբաթավերջին Լոս Անճելոս այցելեց Հայաստանի տեղեկատուական արհեստագիտութեան (information technology) նախարար Յակոբ Արշակեան: Իր կեցութեան ընթացքին յարգարժան երիտասարդ նախարարը՝ շահեկան հանդիպումներ ունեցաւ հաւաքական եւ անհատական մակարդակներու վրայ: Առաջինը՝ մամուլի ասուլիսն էր, որ տեղի ունեցաւ Հինգշաբթի Մայիս 30, 2019, նախաձեռնութեամբ տեղույ Հայաստանի աւագ հիւպատոսութեան, որուն ներկայ գտնուեցան հայ եւ օտար լրատուամիջոցներու ներկայացուցիչներ:

Ուրբաթ, Մայիս 31-ի երեկոյեան, Հայաստանի հիւպատոսարանին մէջ տեղի ունեցաւ շքեղ հիւրասիրութիւն մը, ի պատիւ նախա-

րար Յակոբ Արշակեանի: Ընդունելութեան ներկայ էին Կլեմտէյլի քաղաքապետ Արա Նաճարեան, ինչպէս նաեւ Գալիֆորնիոյ հայ համայնքի կրօնական եւ քաղաքական ու ընկերային կազմակերպութեանց ներկայացուցիչներ: ՄԴՀԿ կը ներկայացնէին ատենապետ Գրիգոր Խոտանեան եւ Գ. Մոլոյեան:

Հայաստանի աւագ հիւպատոս եւ դեսպան Արմէն Բայբուրդեան ողջունի ջերմ խօսքերով շնորհակալութիւն յայտնեց հիւպատոսարանի կողմէ նախաձեռնուած այս միջոցառումին համար իրենց համագործակցութիւնն ու աջակցութիւնը ցուցաբերած Ամերիկահայ Գործարարներու Խորհուրդին, Ամե-

Մարտի 1-ին Սպանութիւն Կատարելու Կասկածանքով Առաջին Ձերբակալուածը

Հայաստանի Յատուկ Քննչական Ծառայութիւնը (ՅՔԾ) Յունիս 4-ի երեկոյան տարածեց հաղորդագրութիւն մը՝ 2008 թուականի Մարտի 1-ին ՀՀ ոստիկանութեան զօրքերու հրամանատարի տեղակալ, շտաբի պետ Գեղամ Պետրոսեանի ձերբակալութեան մասին: Ան կը կասկածուի 10 զոհերէն մէկուն՝ Չաքար Յովհաննիսեանի սպանութեան մէջ:

Հաղորդագրութեան մէջ յատկապէս ըսուած է. «2008 թուականի Մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատուածում Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձութիւնների վերաբերեալ ՀՀ Յատուկ Քննչական Ծառայութիւնում քննուող քրէական գործի շրջանակներում 04.06.2019 թուականին հրազէնի գործադրմամբ Չաքար Յովհաննիսեանին դիտաւորութեամբ կեանքից զրկելու կասկածանքով ձերբակալուած է 2008 թուականի Մարտի 1-ի դրութեամբ ՀՀ ոստիկանութեան զօրքերի հրամանատարի տեղակալի, նոյն ինքը՝ շտաբի պետի պաշտօնը զբաղեցրած Գեղամ Պետրոսեանը»:

Պաշտօնական տեղեկատուութեան համաձայն 31-ամեայ Չաքար Յովհաննիսեանը վիրաւորուած է Մաշտոցի պողոտային վրայ տեղի ունեցած բախումներու ժամանակ: Ան տեղափոխուած է հիւանդանոց, վիրահատուած, բայց գիտակցութեան չգալով մահացած է:

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Կոչոտ Զգուշացում Երեւանից ու Ստեփանակերտից. Ինչ է Սպասուում

ՆԱՅԻՐԱ ԳԱՅՐՈՒՄԵԱՆ

Հայաստանի ԱԳՆ-ն եւ Արցախի Պաշտպանութեան նախարարութիւնը կոչոտ յայտարարութիւններ են արել սահմանին վերջին սրացման առթիւ: Յիշեցնենք, որ Մայիսի 30-ին ատրպէյճանական կողմը յայտնել է իր սպայի մահուան մասին, իսկ Յունիսի 1-ին յայտնի է դարձել, որ հակառակորդի կրակոցից 19-ամեայ հայ զինծառայող է զոհուել:

Էսկալացիան մի քանի կողմ ունի, եւ մի քանիսի մասին արժէ առանձնացնել:

Բրիւսելում Արեւելեան գործընկերութեան վեհաժողովից յետոյ Պաքուսում գիտակցել են, որ իրենց երկրի տարածքային ամբողջականութիւնը միջազգային արդի օրակարգի մէջ չի մտնում: Ենի Ատրպէյճան կուսակցութեան ֆունկցիոններ Սիլվաուշ Նովորուզովը պատմել է, որ Բրիւսելում բանակցութիւնների ժամանակ ճշնուններ են գործադրուել Ատրպէյճանի վրայ երկրի տարածքային ամբողջականութեան հարցում: Նա դա կասել է հայկական լուրջի հետ: Ընդ որում, այդ երկրի ԱԳՆ-ն խօսում է համաշխարհային հանրութեան երկակի չափանիշների մասին:

Այդպիսի իրավիճակը Ատրպէյճանին դրող է որոնել այլ ուղիներ: Նմանատիպ միջոցներից մէկը կարող է լինել Հայաստանում ներքին հակասութիւնների հրահրումները: Ատրպէյճանական մամուլը ակտիւ պտտում է Հայաստանի եւ Արցախի միջեւ հակասութիւնների թեման: Մասնաւորապէս, Ատրպէյճանի ազդեցիկ նախկին դիւանագետ Թոֆիկ Ջուլիֆովը պարզ է փակագծերը եւ յայտարարել է, որ յայտնի չէ, թէ

որտեղից են տուել ատրպէյճանցի մայրի սպանութեան հրամանը՝ Երեւանից, թէ Ստեփանակերտից: Ատրպէյճանը բացառապէս փորձում է սեպ խրել հայկական մայրաքաղաքների միջեւ եւ խաղալ դրա վրայ:

Սակայն դա բացառապէս է եւս մէկ կարեւոր կողմ՝ ո՞վ է սպանել ատրպէյճանցի մայրին: Եղել է դա ներքում հարցերի պարզաբանում, թէ երրորդ կողմի սաղրամք: Արցախի բանակը կտրականապէս հերքում է, որ մայրը սպանուել է հայկական կողմի կրակոցից: ՀՀ ԱԳՆ յայտարարութեան մէջ նոյնպէս նշուել է, որ Ատրպէյճանը զոհերի մասին սուտ տեղեկութիւն է տարածում:

«Հայաստանը կտրականապէս դատապարտում է իրավիճակի սրման ուղղութեամբ վերջին երեք օրուայ ընթացքում Ատրպէյճանի կողմից ձեռնարկուած միտումները՝ որ քայլերը, ինչը դրեւորուել է սեփական կորուստների վերաբերեալ կեղծ տեղեկատուութեան տարածմամբ, Հայաստանի ղեկավարների հասցէին ֆիզիքական բռնութեան վերաբերեալ Ատրպէյճանի խորհրդարանում իշխող կուսակցութեան ներկայացուցչների կողմից հրապարակայնօրէն հնչեցուած ուղղակի կոչերով եւ հրահրողների ռեժիմի խախտումների զգալի աճով, ինչն այսօր հանգեցրեց Արցախի պաշտպանութեան բանակի զինծառայող Սիւրան Մելքոնեանի սպանութեանը», - նշուած է Հայաստանի ԱԳՆ յայտարարութիւնում:

Երեւանը եւ Ստեփանակերտը պնդում են, որ մայրի սպանութեան պատճառներն այլ են, եւ Ատրպէյճանը, իմանալով դա, փորձում է սրել իրավիճակը եւ առիթ փնտրել պայմանաւորուածութիւններ

ներից դուրս գալու համար:

Ինչի՞ց է փորձում խուսափել Պաքուս, մեծացնելով լարուածութիւնը: Եթէ դատենք ԵԱՀԿ ՄԽ համախառն գահներին վերջին յայտարարութիւնից, Հայաստանի՝ բանակցութիւններին Արցախի մասնակցութեան պայմանը կարող է ընդունուել: Դրա մասին է վկայում այն, որ Պաքուսում համախառն գահները հանդիպել են «ատրպէյճանական համայնքի ներկայացուցիչների հետ»:

Յիշեցնենք, որ Հայաստանի վարչապետը հրաժարուել է Արցախի անունից մասնակցել բանակցութիւններին՝ յայտարարելով, որ եթէ նա ներկայացնելու է դարբանազրիների շահերը, որոնք չեն քուէարկել իր օգտին, ապա Հայաստանի եւ Արցախի միաւորումը պէտք արձանագրուելի փաստաթղթերով:

Ատրպէյճանը չի համաձայնուել բանակցութիւններին Ստեփանակերտի մասնակցութեանը եւ չի կարող դրան ողջամիտ բացատրութեան տալ: Դատելով ամէն ինչից՝ որպէս «փոխզիջում» դիտարկում է բանակցութիւններին Արցախի ընտրուած ներկայացուցչի մասնակցութիւնը «ատրպէյճանական համայնքի» հետ միասին: Այնուհետ հասկանում է, որ դա փակուղի է, քանի որ հայկական կողմը չի համաձայնուել դրան: Սակայն նա նաեւ հասկանում է, որ բանակցութիւններին Ստեփանակերտի մասնակցութիւնը կարող է իր կարիքային աւարտը լինել, եւ նա ամէն ինչ կ'անի, որպէսզի երակողմ բանակցութիւններ տեղի չունենան:

Հայկական կողմը վճռական է տրամադրուած: «Ատրպէյճանի դատապարտելի այս գործողութիւնները, շուտափոյթ կերպով չդադարելու դէպքում, կարող են լուրջ

խոչընդոտ դառնալ կարգաւորման գործընթացի շրջանակներում յետագայ քայլերի համար», - նշուած է Հայաստանի ԱԳՆ յայտարարութիւնում: Երեւանը նախագրուածացնում է, որ «Արցախի եւ նրա ժողովրդի անվտանգութիւնը ոչ մի դէպքում սպառնալիքի տակ չի դրուի»: Արցախի պաշտպանութեան նախարարութիւնը, իր հերթին, նախագրուածացրել է, որ Ատրպէյճանի վերջին սաղրամքը անպատասխան չի մնայ, իսկ հետեւանքները ցաւոտ կը լինեն:

Ռուս լրագրողների հետ հանդիպման ժամանակ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը յայտարարեց, որ Լեւոնային Ղարաբաղում էսկալացիայի յաջորդ փուլն արդէն տեղային չի լինի: Այդ պատկերը, ըստ նրա, հասկանում են ոչ միայն Երեւանում, այլեւ Մոսկուայում, Պաքուսում եւ Թեհրանում: Նա յայտարարեց, որ Մոսկուան բաւարար լծակներ ունի էսկալացիան կանխելու համար, եւ հաւատում է, որ Մոսկուան իրավիճակի սրման դէպքում կ'օգտուի այլ լծակներից: Նիկոլ Փաշինեանը հազիւ թէ չի շքր Մոսկուայի լծակները, որը նոյնպէս շահագրգիռ է երակողմ բանակցութիւնները տապալելու մէջ:

Հայաստանն առաջարկում է աւելի յարմար տարբերակ. ԵԱՀԿ հրահրողների ռեժիմի խախտումների հետքնութիւնների մեխանիզմների ներդրում եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենեակի ընդլայնում՝ համաձայն 2016 թուականին վիեննայում եւ Սանկտ Պետերբուրգում Ատրպէյճանի ստանձնած պարտաւորութիւնների:

«ԼՐԱԳԻՐ»

Անցումային Արդարադատութեանը Ընդդիմացողների Կարօտախտը. մի Քիչ Ազնիւ Եղէք

ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԱՆ

Արդարադատութեան համակարգում արմատական բարեփոխումներ անցկացնելու, «վեթիկներ» եւ անցումային արդարադատութեան մեկնարկի վերաբերեալ ՀՀ վարչապետի յայտնի ելոյթը մի շարք քաղաքական շրջանակների համար պատեհ առիթ դարձաւ իրենց գոյութեան մասին յիշեցնելու: Թէ ինչքանով էր վարչապետի յայտարարութիւնը հասունացած, անհրաժեշտ կամ գուցէ ուշացած, չգնահատենք, փաստենք, սակայն, որ վերջին շրջանի մի շարք քաղաքական եւ քաղաքական յտակ երանգաւորում ունեցող իրաւական անցուդարձեր առաւել ակներեւ դարձրին ամբողջ արդարադատութեան համակարգի վերակառուցման եւ «ռեստարտի» հրատապութիւնը:

Բնականաբար, անցումային արդարադատութիւնը, վեթիկներ եւ հանրութեան աւողջացման նմանօրինակ այլ գործիքակազմերի ու համակարգերի անցումը խորը մտահոգութիւններ է առաջացրել «նախկինների» ճամբարներում: Զարմանալի չէր, որ անցումային արդարադատութեան վերաբերեալ վարչապետի հենց առաջին իսկ յիշատակումից յետոյ ՀՀ-ական եւ ներկայ իշխանութեան նկատ-

մամբ քննադատական վերաբերմունք ունեցող մի շարք շրջանակների կողմից ակտիւ հակաքաղաքակցութիւն սկսուեց հենց «անցումային արդարադատութիւն» գործիքակազմի նկատմամբ:

Ընդ որում, հետաքրքիրն այն էր, որ վերոյիշեալ շրջանակները «անցումային արդարադատութիւնը» սկսեցին համեմատել «տորոյկաների», «վրէժխնդրութեան մահակի», «սահմանադրական կարգ տապալելու գործիքի» եւ այսօրինակ երեւոյթների հետ: Ըստ ընդդիմադիրների մէկ այլ գնահատականի՝ անցումային արդարադատութիւնը կիրառուել է արդարադատութիւնը կիրառուել է ափրիկեան երկրներում, որտեղ միջցեղային բախումներ, կոտորածներ են եղել, եւ այն երկրներում, որտեղ արդարադատութեան համակարգը ջլատուած է եւ անկարող արդարադատութիւն իրականացնելու: Թէ ինչու են մոռացել կամ գուցէ եւ տեղեակ էլ չեն եւրոպական մի շարք երկրներում (Սպանիա, Լեհաստան, Պուլկարիա եւ այլն) այս գործիքակազմի կիրառման մասին, այլ հարց է: Փաստը, սակայն, այն էր, որ այսօրինակ հիմնաւորումը բերում են կրկին անգամ նշեւոր համար, որ անցումային արդարադատութիւնը «վտանգաւոր վիրահատական գործիք է եւ կարող է դառնալ վրէժխնդ-

րութեան միջոց»:

Շեշտենք՝ նման մօտեցմամբ անցումային արդարադատութեան հնարաւոր կիրառումից մտահոգուած «նախկինները» հենց այստեղ էլ ի ցոյց են դնում իրենց անտեղեակութիւնը բուն գործիքակազմից: Թերեւս սոյն դիտարկման սահմաններում նպատակայարմար չէ եւ հնարաւոր էլ չէ ամբողջութեան ներկայացնել անցումային արդարադատութեան ամբողջական բովանդակութիւնն ու էութիւնը, յաւելենք միայն այն, որ այս գործընթացի առանցքը ոչ թէ պատիժն է, այլ հանրային համերաշխութիւնը եւ նաեւ սրա միջոցով պատժի բացառումը: Սակայն քաղաքային ելակէտ է, որն ինքնին բացառում է գործիքակազմի կիրառումը որպէս «մահակ» կամ «վրէժխնդրութիւն»: Վերջապէս հենց «անցումային արդարադատութիւն» արտայայտութիւնը կազմուած է «անցում» եւ «արդարադատութիւն» բառերից, որոնցից առաջինը խորհրդանշում է նորի սկիզբը, փոփոխութիւնը, շարժումը, իսկ երկրորդը՝ իրաւունքի գերակայութիւնը:

Բոլորովին այլ հարց է, որ ներկայիս իշխանութեան նկատմամբ ընդդիմադիր դիրքավոր-



ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՏԱԹԵՐԹ՝
ՍՈՅՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նախագահ Սարգսյան Առաջադրած է Վախճանի Գրիգորեանի Թեկնածուները Սահմանադրական Դատարանի Դատաւորի

Սահմանադրական դատարանի դատաւորի թեկնածուի պաշտօնին վերջին թեկնածուի՝ Արթուր Վախճանի շնորհակալական մէկ օր անց նախագահ Արմէն Սարգսյան այդ պաշտօնին առաջադրած է փաստաբան Վահէ Գրիգորեանի թեկնածուները:

Սահմանադրական դատարանի դատաւորի թեկնածու առաջադրելու նախագահ Սարգսյանի երրորդ փորձն է այս: Նախորդ երկու թեկնածուները մերժած էր գործող Ազգային ժողովը:

Հարցին, թէ ինչպէս կը վերաբերի Վահէ Գրիգորեանի թեկնածութեան խորհրդարանական մեծամասնութիւն կազմող քաղաքական ուժը, Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանը պատասխանած է. - «Շատ անկեղծ սսեմ, շատ ուղիղ սսեմ՝ չափազանց դրական: Ինչպիսին կը լինի իմ քաղաքական վերաբերմունքը, ինչպիսին կը լինի ընտրութեան արդիւնքը, կերեւալ յառաջիկայում»:

Մարտ 1-ի գոհնու իրաւաջարողներու ներկայացուցիչ Վահէ Գրիգորեանի թեկնածութիւնը նախագահ Սարգսյանը երկրորդ անգամ առաջադրած է: Առաջինը անցեալ տարի էր՝ յեղափոխութենէն ետք, որ տապալեց Ազգային ժողովի մեծամասնութիւն Հանրապետական խմբակցութիւնը:

«Վահէ Գրիգորեանը եթէ ընտրուի, լինելու ա անկախ Սահմանադրական դատարանի դատաւոր: Նրա հաւանական ընտրուելը չի նշանակում էնտեղ մեր մարդը ունենալը: Եղ կառուցը պիտի լինի անկախ, էր մարդիկ պիտի լինեն անկախ», - աւելցուցած է խորհրդարանի նախկին պաշտօնեաներու կողմէ գումարներու արտահոսք չկայ, կ'աւելնայ ներհոսքը: Այս մասին խորհրդարանէն ներս լրագրողներուն ըսած է Կեղրոնական դրամատան նախագահ Արթուր Զաւատեանը՝ անդրադառնալով հարցին, թէ նախկին պաշտօնեաներու նկատմամբ յարուցուած քրէական գործերով երկրէն փողոկոս արտահոսք կա՞ն:

«Հայաստանէն Նախկին Պաշտօնեաներու Կողմէ Գումարներու Արտահոսք Չկայ» Կեղրոնական Դրամատան Նախագահ

Հայաստանէն նախկին պաշտօնեաներու կողմէ գումարներու արտահոսք չկայ, կ'աւելնայ ներհոսքը: Այս մասին խորհրդարանէն ներս լրագրողներուն ըսած է Կեղրոնական դրամատան նախագահ Արթուր Զաւատեանը՝ անդրադառնալով հարցին, թէ նախկին պաշտօնեաներու նկատմամբ յարուցուած քրէական գործերով երկրէն փողոկոս արտահոսք կա՞ն:

Զուատեանը ըսած է, որ արտահոսքի հարցերուն շատ ուշադիր են: «Որոշակի աճ կայ, որը գուրակցում է ներհոսքի հետ: Եւ դա չի նշանակում, որ տեւական կամ խոշորածաւալ արտահոսք կայ երկրից: Այդպիսի երեւոյթներ գոյութիւն չունեն», - ըսած է ան:

Հայկական Երկինք Պիտի Ստնէ Օդանաւային Նոր Ընկերութիւն

Հայկական թռիչքուղիներու շուկայ պիտի մտնէ նոր՝ «Արմենիա էյրուէյզ» օդանաւային ընկերութիւնը, որ առաջին անգամ 15 Յունիսին պիտի սկսի կանոնաւոր թռիչքներ իրականացնել Երեւան-Թեհրան-Երեւան ուղղութեամբ: «Արմէնիա էյրուէյզ»-ի հետ գրոցի ժամանակ՝ այս մասին ըսած է «Արմենիա էյրուէյզ» օդանաւային ընկերութեան տնօրէն Աուրէն Տաւուտեանը: «Մեր ընկերութիւնը առաջին անգամ թռիչք կը կատարէ: Այժմ ունինք 2 օդանաւ, սակայն դեռ մէկը պիտի շահագործուի: Օդանաւը 112 տեղանոց է», - նշած է Տաւուտեանը: Թռիչքները պիտի կայանան «BAe 146-300» տիպի օդանաւով՝ իւրաքանչիւր երկուշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերուն, իսկ 24 Յունիսէն՝ ամէն օր:



Սահմանադրական դատարանի դատաւորի թեկնածու՝ փաստաբան Վահէ Գրիգորեան դարանի խօսնակը:

Ընդդիմադիր «Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Տարօն Միմոնեանը պնդած է, որ նախագահը երկրորդ անգամ նոյն թեկնածուն չի կրնար առաջադրել. - «Նոր թեկնածու է պահանջուած օրէնքը: Եթէ անձը մէկ անգամ ներկայացուել է, երկրորդ անգամ միեւնոյն իրաւասու անձի կողմից չի կարող ներկայացուել որպէս թեկնածու: Հետեւաբար ես սա օրէնքի խախտում եմ համարում»:

Արարատ Միրզոյեանը հակադրած է. - «Իրաւաբանների հետ խորհրդակցութիւն ա եղել, հազար անգամ քննարկուել ա էս թեման հրապարակային: Հիմա ես իմաստ չեմ գտնում իրաւաբանների բերած բոլոր փաստարկները տառ առ տառ վերաշարադրել: Կայ մէկ պատգամաւոր իրաւաբան, որը պնդում ա, որ էդպէս չէր կարող լինել, եւ կան բազմաթիւ իրաւաբաններ՝ այդ թուում եւ պատգամաւոր, որոնք պնդում են, որ էդպէս կարող է լինել»:

Լրագրողական Կազմակերպութիւնները կը Պահանջեն Պաշտօնեաներէն՝ Զսպուածութիւն Յուցաբերել ԶԼՄ-ներու Հետ Շփուելու Ժամանակ

Մէկ տասնեակ լրագրողական կազմակերպութիւններ համատեղ յայտարարութիւն տարածած են՝ վերջին շրջանին ԶԼՄ ներկայացուցիչներու պատիւն ու արժանապատուութիւնը նսեմացնող միջադէպերու առնչութեամբ:

Յայտարարութեան մէջ մասնաւորապէս նշուած է, որ 29 Մայիսին, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեանը, դժգոհելով լրագրողներէն, վիրաւորական արտայայտութիւններ թույլ տուած է անոնց հասցէին, ապա նշած, թէ իրեն անհաճոյ հարցեր տալու համար գումար կը վերցնեն ու պատուէր կը կատարեն:

«Մասնաւորապէս, Ծառուկեանը մատնացոյց է արել Aravot.am-ի լրագրող Հոփիսիմէ Ճէպէճեանին ու սսեյ, որ վերջինս պէտք է պատասխան տայ իր հնչեցրած հարցերի համար: Սա առաջին դէպքը չէ, երբ ԲՀԿ ղեկավարն այսօրինակ վարքագիծ է դրսեւորում: Եւ ցաւօք, նա միակը չէ. մենք բազմիցս ենք արձանագրել փաստեր, երբ տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, պետական պաշտօնեաներ, գործարարներ ու հանրային այլ դէմքեր ԶԼՄ ներկայացուցիչների հետ շփուելիս իրենց համար անցանկալի հարցերին ի պատասխան վիրաւորում կամ փորձում են ձնչել ու «դասեր տալ» նրանց», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Լրագրողական կազմակերպութիւնները նաեւ նշած են, որ վերջին ամսուան ընթացքին այդպիսի վարքագիծ դրսեւորած են «5-րդ ալիք» հեռուստաընկերութեան սեփականատէր Արմէն Թաւադեանը՝ Civilnet.am լրատուական կայքի

լրագրող Գէորգ Թոսունեանի հանդէպ, նախկին պատգամաւոր Ռուբիկ Յակոբեանը՝ Հանրային հեռուստաընկերութեան մեկնաբան Պետրոս Ղազարեանի, Բարձրագոյն դատական խորհուրդի նախագահի պաշտօնակատար Գէորգ Դանիէլեանը՝ «Ազատութիւն» ռատիոկայանի թղթակից Արտակ Խուլեանի հանդէպ եւ այլն:

«Մենք՝ ներգոյ ստորագրեալ կազմակերպութիւններս, վրդովմունք ենք արտայայտում այս դէպքերի առնչութեամբ ու անընդունելի ենք համարում իրենց մասնագիտական պարտականութիւնները կատարող լրագրողներին հանդէպ նման վերաբերմունքը: Մանաւանդ, որ այդ միջադէպերը գուրդուում են ոչ միայն վիրաւորական արտայայտութիւններով, այլեւ զրպարտութեամբ եւ լրագրողի պատիւն ու արժանապատուութիւնը նսեմացնելով, ինչը կարող է դատական քննութեան առարկայ դառնալ», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Հաշուի առնելով վերոգրեալը՝ կազմակերպութիւնները կը պահանջեն քաղաքական գործիչներէն, պետական պաշտօնեաներէն՝ հանդուրժողականութիւն եւ զսպուածութիւն ցուցաբերել ԶԼՄ-ներու ներկայացուցիչներու հետ շփուելու ժամանակ, իսկ վերջիններուս կողմէ՝ չխուսափելով սուր հարցադրումներէն, այդուհանդերձ, դրսեւորել անհրաժեշտ նրբանկատութիւն եւ պատասխանատուութիւն, հարագատ մնալ մասնագիտական էթիքայի նորմերուն, քանզի յաճախ քաղաքական դրդապատճառներով ստեղծուող լարուած իրավիճակները կրնան պայթուածութեան դարձնել արդէն ծայրայեղ թէ՛ միջոցառումներով մետիա դաշտի մէջ:

Սամուէլ Բաբայեանի Համակիրներուն Հետ Տեղի Ունեցած Միջադէպի Հարցով Կայ Երկու Ձերբակալուած

Լեւոնային Ղաւրաբաղի Պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Բաբայեանի համակիրներու ուղղութեամբ հրագնէն կրակ արձակելու դէպքի առթիւ յարուցուած քրէական գործի շրջանակէն ներս ձերբակալուած է երկու անձ: Այս մասին յայտնած է ՀՀ քննչական կոմիտէի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան պետ Նայիրա Յարութիւնեանը:



Կը ձերբակալուի դէպքի մասնակիցներէն մին պարզաբանման արդիւնքով ծագած վէճ է:

Վերջիններս ձերբակալուած են գնէք կամ որպէս գնէք օգտագործուող առարկայի գործադրմամբ խուլիկանութիւն կատարելու ինչպէս նաեւ ապօրինի գնէք կրելու կասկածանքով:

Նախօրէին ԱԱԾ տնօրէն Արթուր Վանեցեանը յայտնած էր, որ կատարուածը երկու խումբ մարդոց միջեւ նիւթական հարցերու

պարզաբանման արդիւնքով ծագած վէճ է: Ոստիկանութիւնը շեշտած էր, որ նախքան Սամուէլ Բաբայեանի գրասենեակի յայտարարութիւնը Օստիկանութիւնը արդէն տուեալներ ունէր, եւ պետի յանձնարարութեամբ ձեռնարկուած են անհրաժեշտ հետախուզական միջոցառումներ միջադէպի բոլոր մասնակիցներու ինքնութիւնը, անոնց գտնուելու վայրը ճշդելու, ինչպէս նաեւ կատարուածի բոլոր հանգամանքները պարզելու ուղղութեամբ:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանը Կը Դատապարտէ Իրավիճակի Սրման Ուղղութեամբ Ատրպէյճանի Քայլերը

Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարութիւն տարածած է՝ կտրականապէս դատապարտելով իրավիճակի սրման ուղղութեամբ վերջին երեք օրուան ընթացքին Ատրպէյճանի կողմէ ձեռնարկուած քայլերը:

Յայտարարութեան մէջ, մասնաւորապէս, ըստուած է՝ «Հայաստանը կտրականապէս դատապարտում է իրավիճակի սրման ուղղութեամբ վերջին երեք օրուայ ընթացքում Ատրպէյճանի կողմից ձեռնարկուած միտումնաւոր քայլերը, ինչը դրսեւորուել է սեփական կորուստների վերաբերել կեղծ տեղեկատուութեան տարածմամբ, Հայաստանի ղեկավարների հասցէին ֆիզիքական բռնութեան վերաբերել Ատրպէյճանի խորհրդարանում իշխող կուսակցութեան ներկայացուցիչների կողմից հրապարակայնօրէն հնչեցուած ուղղակի կոչերով եւ հրազարի ռեժիմի խախտումների զգալի աճով, ինչը յանգեցրեց Արցախի պաշտպանութեան բանակի զինծառայող Սիփան Մելքոնեանի սպանութեանը»:

Հայաստանի արտաքին գերատեսչութիւնը նշած է՝ Ատրպէյճանի այս գործողութիւնները տեղի

ունեցած են այն բանէն յետոյ, երբ 30 Մայիսին ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահները հանդէս եկան առաւելագոյնս զսպուածութիւն ցուցաբերելու եւ լարուածութենէն խուսափելու վերաբերել կողմերուն ուղղուած կոչով:

«Այս վերջին զարգացումները մարտահրաւէր են նետում ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահների հովանու ներքոյ Հայաստանի եւ Արցախի կողմից գործադրուող կառուցողական ջանքերին՝ ուղղուած հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը եւ դրան նպաստող միջավայրի ձեւաւորմանը, եւ հանդիսանում են լուրջ յետքայլ վերջին ամիսների ընթացքում ձեռնարկուած բոլոր ջանքերից: Ատրպէյճանը ոտնահարում է իր իսկ յանձնառութիւնները, որոնք ստանձնել է 2018թ. Միլանում, 2019թ. Վիեննայում եւ 2019թ. Մոսկուայում: Հայաստանի արտաքին գործերի նախարարութիւնը իր խորին ու անկեղծ ցաւակցութիւնն է յայտնում Արցախի պաշտպանութեան բանակի ժամկէտային զինծառայող Սիփան Մելքոնեանի ընտանիքին եւ հարազատներին», - ըստուած է յայտարարութեան մէջ:

Ազգային Ժողովը Ընդունած Է Մարտ 1-ի Ձոհերու Հարազատներուն Եւ Տուժածներուն Հատուցում Տրամադրելու Օրինագիծը

Հայաստանի Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջութեամբ միաձայն ընդունած է Ազգային ժողովի փոխնախագահներ Ալեն Սիմոնեանի ու Լենա Նազարեանի կողմէն շրջանառութեան մէջ դրուած «2008 թուականի Մարտ 1-ին 2-ը Երեւան քաղաքի մէջ տեղի ունեցած իրադարձութիւններու ժամանակ տուժած անձանց աջակցութեան մասին» օրինագիծը:

Ըստ այդմ, Մարտ 1-ին միջին եւ ծանր վնասուածք ստացած քաղաքացիները աջակցութենէն օգտուելու համար պէտք է ներկայացնեն դատաբժշկական փորձագէտի եզրակացութիւնը: Օրէնքը չի վերա-

բերիր թեթեւ մարմնական վնասուածք ստացած անձանց:

Առաջին ընթերցմամբ քննարկման ժամանակ նախագիծի հեղինակ Լենա Նազարեանի ներկայացուցած՝ քննչական ծառայութեան տուեալներով, 2008-ի Մարտ 1-2-ին ծանր եւ միջին աստիճանի վնասուածք ստացած է 63 քաղաքացի:

Կը նախատեսուի աջակցութիւն տրամադրել նաեւ Մարտ 1-ին տուժած ոստիկաններուն՝ բացի անոնցմէ, որոնք քրէական հետապնդման ենթարկուած են եւ չեն արդարացուած:

Աջակցութեան չափն ու կարգը դեռ յայտնի չեն, այն պիտի սահմանէ Կառավարութիւնը:

Ձոհրապ Մնացականեանը Հանդիպած Է Յունաստանի Եւ Կիպրոսի Իր Գործընկերներուն



Հայաստանի, Կիպրոսի եւ Յունաստանի ԱԳ նախարարները

ՀՀ Արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Աննա Նաղտալեանի թուիթըրեան էջէն կը տեղեկանանք, որ ՀՀ արտաքին գործոց նախարար Չոհրապ Մնացականեանը հանդիպած է Յունաստանի արտաքին գործոց նախարար Կիորկոս Քաթրուկալոս եւ Կիպրոսի արտաքին գործոց նախարար Նիքոս Խրիսթոուլիտեսին հետ:

Ըստ Նաղտալեանի սա առա-

ջին եռակողմ հանդիպումն է գերատեսչութիւններու ղեկավարներուն միջեւ:

«Առաջին եռակողմ հանդիպումն արտաքին գործոց նախարարների միջեւ: Հայաստանից՝ Չոհրապ Մնացականեանը, Յունաստանից՝ Կիորկոս Քաթրուկալոսը եւ Կիպրոսից՝ Նիքոս Խրիսթոուլիտեսը սկսել են հետաքրքիր օրակարգ: Մնացականեանը համոզմունք է յայտնել, որ յազեցած

«Շատ Կարեւոր Է, Որ Հնարաւորինս Արագ Կերպով Գործարկենք Գիւմրիի Օդակայանը». Փաշինեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ «Քորփորասիոն Ամերիկա» օդակայաններու ղեկավարութեան ժողովի ժամանակ

Օդային փոխադրումները Հայաստանի Հանրապետութեան համար ունին ռազմավարական նշանակութիւն, յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ «Քորփորասիոն Ամերիկա» օդակայաններու ղեկավարութեան գագաթնաժողովի ժամանակ:

Վարչապետը ընդգծած է՝ Հայաստանը, ցաւօք, իր գոյութեան, անկախութեան առաջին օրերէն կիսաշրջափակուած իրավիճակի մէջ է, եւ այս պայմաններուն մէջ օդային փոխադրումը չափազանց կարեւոր նշանակութիւն ունի:

Փաշինեանի խօսքով՝ ոլորտին մէջ արդէն կան գոհացուցիչ արդիւնքներ:

«Մենք նայում ենք ապագային, ձեւաւորել ու ձեւաւորում ենք ապագայի օրակարգն, այդ օրակարգում ես կ'ուզէնայի ընդգծել մի քանի կարեւոր առանձնայատկութիւն՝ շատ կարեւոր է, որ մենք ի վերջոյ հնարաւորինս արագ գործարկենք ամբողջ ծաւալով Գիւմրիի օդակայանը, որն իր հերթին, յոյս ունենք, կը նպաստի մէկ այլ կարեւոր խնդրի լուծմանը՝ դա թուիք թոմսերի գների նուազումն է, որը շատ կարեւոր է նաեւ Հայաստանում ռազմավարական նշանակութիւն ունեցող մէկ այլ ոլորտի՝ զբօսաշրջութեան զար-

գացման համար: Այս հարցերում մենք ի հարկէ աշխոյժօրէն համագործակցելու ենք եւ տրամադրուած ենք համագործակցել մեր գործընկերների հետ», - ըսած է Փաշինեանը:

«Յաջորդ խնդիրը, որ ես կ'ուզէնայի ընդգծել, հետեւեալն է՝ Հայաստանի Հանրապետութիւնում, ցաւօք, տեղական օդային փոխադրողների գործունէութիւնը եւ ծաւալներն այնպիսին չեն, ինչպիսին մենք կը ցանկանայինք, ինչպիսին վայել է անկախ, ինքնիշխան երկրին, եւ սա մեր համագործակցութեան յաջորդ ուղղութիւնը պէտք է լինի, որպէսզի կառավարութիւնը, «Զուարթնոց միջազգային օդակայանները», «Քորփորասիոն Ամերիկա» ընկերութիւնն իրար հետ համագործակցուած կարողանան ստեղծել այնպիսի պայմաններ, որ հնարաւոր լինի հայկական օդային փոխադրողի, կամ փոխադրողների ի յայտ գալը եւ նրանց մրցունակութիւնն ապահովելը: Սրանք են այն հիմնական, առանցքային ռազմավարական ուղղութիւնները, որոնց մասին մենք պարոն էռնեկեանի հետ մի քանի անգամ արդէն քննարկումներ ունեցել ենք», - յայտարարած է Հայաստանի վարչապետը:

Դատաւոր Գրիգորեանը Սահմանադրական Դատարանէն Ետ Վերցուցած Է Քոչարեանի Գործի Նիւթերը

Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանը կալանքէն ազատ արձակած, անոր գործով վարույթը կասեցնելու մասին որոշում կայացուցած եւ այն Սահմանադրական դատարան (ՄԴ) ուղարկած դատաւոր Դաւիթ Գրիգորեանը ՄԴ-էն ետ վերցուցած է գործի նիւթերը՝ պատճէնահանելու եւ վերաքննիչ դատարան ուղարկելու համար: Այդ մասին «Ազատութեան» փոխանցած են դատաւոր Գրիգորեանի զրասենեակէն:

Թէ՛ Գլխաւոր դատախազութիւնը, թէ՛ Մարտ 1-ի գոհերու իրաւաշարժողներու ներկայացուցիչը վերաքննիչ դատարանին մօտ բողոքարկած են Քոչարեանը կալանքէն ազատ արձակելու եւ քրէական գործը կասեցնելու մասին որոշումները:

Աւելի վաղ վերաքննիչ քրէա-

կան դատարանէն «Ազատութեան» յայտնած էին, որ կը շարունակեն սպասել առաջին ատեանի դատարանի պատասխանին՝ գործի նիւթերը Սահմանադրական դատարանէն ետ ստանալու վերաբերել: Վերաքննիչ դատարանէն, սակայն, յայտարարած էին, որ առանց նիւթերու չեն կրնար վարույթ ընդունիլ բողոքները կալանքի եւ գործի կասեցման որոշումներու հետ կապուած:

Սահմանադրական դատարանի աշխատակազմն ալ հաղորդագրութիւն տարածած էր՝ վստահեցնելով, որ Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի եւ միւսներու գործի նիւթերը Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանի դատաւոր Դաւիթ Գրիգորեանի կողմէ համապատասխան գրութիւն ներկայացուելու պարագային կրնան վերադարձուիլ:

Բագրատ Էստուկեան. «Ընդհանրապէս Թուրքիայում Հայերի Դէմ Նման Յարձակումները Ատելութեան Դրոշմով Են Կատարուում»

Մայիսի 31-ին Ստամբուլի Սամաթիայ թաղամասում անյայտ անձինք յարձակուել էին Ստամբուլում բնակուող Արփինէ անունով հայ կնոջ վրայ: Դիմակաւորուած անձինք ներխուժել են նրա բնակարան, դանակահարել նրան ու դիմել փախուստի՝ բղաւելով, «սաչ դեռ սկիզբն է»: Դէպքի կապակցութեամբ հետաքննութիւն է սկսուել: Պարզուել է, որ Արփինէն Հայաստանի քաղաքացի է:

Ermenihaber.am-ի հետ գրուցել է պոլսահայ լրագրող, «Ակօս» պարբերականի հայերէն բաժնի խմբագիր Բագրատ Էստուկեանը՝ մեկնաբանելով Ստամբուլում տեղի ունեցած դանակահարութեան դէպքը:

- Սամաթիայ թաղամասում հայ կնոջ վրայ յարձակումն վերաբերեալ որեւէ մանրամասների տիրապետում էք:

- Առաջիկայում, քանի որ մենք միայն իմացել ենք, թէ դէպքը ինչպէս է տեղի ունեցել, մանրամասները դեռեւս յայտնի չեն, որքան գիտեմ: Յարձակուողները դիմակաւորուած են եղել: Գիտենք, որ երկու հոգի են եղել եւ արդէն գիտենք, որ նախապէս ատելութեան պատգամներով, սպառնալիքի բնոյթով գրութիւններ էին փակցրել այդ մարդկանց բնակարանի վրայ:

- Արդեօք դա կենցաղային հոդի վրայ էր արուած, թէ կան այլ պատճառներ:

- Ամէն պարագայում, երբ հայի վրայ նման յարձակում է լինում, մեր մտքում առաջինը գալիս են ատելութեան դրոշմով կատարուած յանցագործութիւնները: Այս դէպքում էլ ենք այդպէս կարծում, որ հայատեաց դրոշմով կատարուած յանցագործութիւն է: Բայց աւելի խորը չենք իմանում:

- Իսկ հնարաւոր է, որ թուրք ազգայնականները թիրախավորել են հենց յատուկ Հայաստանի քաղաքացիներին, թէ ընդհանուր հայերի դէմ են խմորումներ տեղի ունենում:

- Առհասարակ հայերի դէմ է թուրքիայում տիրող ատելութիւնը,



ազգայնական շրջանակներում տիրող ատելութիւնը: Իրենց համար շատ մեծ նշանակութիւն չունի հայաստանցի հայ է, թէ տեղացի հայ:

- Ինչ-որ վտանգ տեսնո՞ւմ էք, որ նման դէպքերը կարող են յաճախակի բնոյթ կրել:

- Ոչ, չունենք այդպիսի ակնկալիքներ, որ յետագայում անպայման պետք է նման դէպքեր լինեն, բայց հաստատ համոզում կայ, որ ամէն վայրկեան, ամէն պահ կարող է նման բան տեղի ունենալ:

- Ինչպէս գիտեմք, Հրանտ Դիմքի սպանութեան մախապատրաստման մասին թուրքական իրաւապահ մարմինները տեղեակ են եղել: Այս թեմայի հետ զուգահեռ անցկացնելով՝ հնարաւոր է, որ իրաւապահ մարմինները մախապետ տեղեակ են եղել, բայց անգործութեան են մատնուել: Եւ արդեօք սա իրենց կողմից թողուութեան հետեւանք չէ:

- Ոչ, ես նոյնը չեմ ասի, որովհետեւ Հրանտ Դիմքի օրինակում նա պետական ոստիկան էր: Այդ ոստիկանը ծրագրուած էր պետական մարմինների կողմից եւ յետոյ ոստիկանները փողոցից էին գտել եւ շահագործել: Այս դէպքը նման չէ Դիմքի օրինակին եւ կարծես թէ այն անհատական ատելութեան դրոշմով է, այսինքն

պետութեան կողմից չի գործուել: Այս դէպքում պետութիւնը, աւելի ճիշտ ոստիկանութիւնը կարող է ձեռնպահ մնալ: Հնարաւոր է, որ մեծ ցանկութեամբ չցանկանան փնտռել այս յարձակման հեղինակին:

- Ըստ Ձեզ՝ այս դէպքը թուրք ազգայնական խմբաւորման կողմից է արուած, թէ անհատական դրոշմով է:

- Հարկաւ, հնարաւոր է, քանի որ այդպիսի կուսակցութիւններ կան, երիտասարդական կազմակերպութիւններ կան: Հաւանական է, որ նրանց ձեռագիրը լինի, բայց չեմ կարծում, որ պետութիւնն է ծրագրել:

- Թուրքիայի իրաւապահ մարմինները կանխարգելելու փորձեր երբեւէ ձեռնարկել են, որպէսզի նման դէպքերն այլեւս չկրկնուեն:

- Ոչ, այդպիսի տեսանելի փորձեր երբեք գոյութիւն չեն ունեցել, ոչ էլ պատգամներ: Արդարեւ, այս ոճիւրը նոյնպէս թուրքիայի շատ թերթերում արձագանք չգտաւ, միայն «Ակօսի» լրատուութիւնը կար եւ մէկ-երկու ընդդիմադիր թերթեր անդրադարձան այդ դէպքին՝ յղում տալով «Ակօսին»: Դէ իսկ իշխանամէտ մամուլը, որն ընդհանուր առմամբ կազմում է թուրքիայի մամուլի 95 տոկոսը, առհասարակ չարձագանքեց այդ միջոցառման:

Չեխիոյ Դատարանը Բաւարարած է Նարեկ Սարգսեանը Հայաստանին Յանձնելու Միջնորդութիւնը



Փրակի Քաղաքացի դատարանը բաւարարած է Նարեկ Սարգսեանը Հայաստանի իրաւասու մարմիններուն յանձնելու միջնորդութիւնը: Այդ մասին «Ազատութեան» փոխանցած են Հայաստանի գլխաւոր դատախազութիւնէն:

Դատախազութիւնը նաեւ նշած է, որ իրենց դիմումի հիման վրայ Չեխիոյ օրէնսդրական իրաւակարգաւորումներու եւ ընթացակարգերու պահպանմամբ Նարեկ Սարգսեանի յանձնման գործընթացը բնականոն կը շարունակուի:

Անցիլայ Երկուշաբթի չեխական «Tyden» պարբերականը հաղորդած էր, որ Չեխիան կրնայ Հայաստանին արտախանձնել նախկին նախագահ Սերժ Սարգսեանի եղբորդին՝ Նարեկ Սարգսեանը: Արտախանձնելու թոյլտուութիւնը, ըստ «Tyden»-ի, տուած է Փրակիի դատարանը, անցեալ շաբաթ:

Յիշեցնենք, որ Նարեկ Սարգսեանը ձերբակալուած է անցեալ տարի, Դեկտեմբերին, Փրակի մէջ՝ ինթըրփոլի եւ չեխական ոստիկանութեան աշխատակիցներու կողմէ: Իրաւապահներուն ան ներկայացած էր կուսութեամբային քաղաքացի Ֆրանչիսկո Կոնզալեսի անունով եւ կեղծ անձնագրով:

ՀՀ երրորդ նախագահի եղբորդին Հայաստանի մէջ կը մեղադրուի թմրանիւթերու ապօրինի շրջանառութեան եւ անօրինական զէնք պահելու համար:

Աճած են Հայաստանէն Փայլաթիթեղի, Տուրմի, Գինիի Արտահանման Ծաւալները

Կառավարութեան նիստի ժամանակ ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարար Տիգրան Խաչատրեանը ներկայացուցած է տնտեսական հիմնական ցուցանիշները եւ նշած, որ Պետական եկամտներու կոմիտէի տուեալներով՝ Ապրիլին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի համեմատ արտահանման ծաւալը աճած է 14,7 տոկոսով:

«Արմենալ» ընկերութեան փայլաթիթեղի արտահանման ծաւալներն Ապրիլին նախորդ տարուայ Ապրիլի նկատմամբ աճել են 44 տոկոսով: Ծխախոտի արտադրանքի արտահանման ծաւալները Ապրիլին նախորդ տարուայ ապրիլի համեմատ աճել են 60 տոկոսով: Ոսկերչական արտադրանքի առաջին չորս ամիսների արտահանումը կազմել է 14 միլիոն ԱՄՆ տոլար: Նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի նկատմամբ արտահանման աճը կազմել է 68 տոկոս», - «Արմէնբրէս»-ի փոխանցմամբ, ըսած է Խաչատրեանը:

Նախարարի խօսքով՝ տուրմի արտադրանքի արտահանումը չորս ամսուան մէջ կազմած է 5 միլիոն տոլար, արտահանման ծաւալը աճած է 34 տոկոսով:

Գինիի արտահանման ծաւալներու աճը ընթացիկ տարուան առաջին 4 ամիսներուն նախորդ տարուան չորս ամիսներուն համեմատ կազմած է 11 տոկոս:

Առաջին եռամսեակին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի նկատմամբ՝ Կեցութեան եւ հանրային սնունդի հետ կապուած ծառայութիւններու աճը կազմած է 23,5 տոկոս: Ելեմտային եւ ապահովագրական ծառայութիւնները աճած են 20 տոկոսով: Ապրանքներու ներմուծման աճը Ապրիլին կազմած է 12,7 տոկոս:

Ապրիլեան Պատերազմի Հանգամանքները Շարունակուած Է 1-Էն

Եան պատերազմի դէպքերը եւ չկարծեր, որ քննիչ յանձնաժողովի եւ Սէյրան Օհանեանի ուսումնասիրութիւնները կրնան հակասութիւններու մէջ մտել: Անոր խօսքով՝ յանձնաժողովը պիտի ուսումնասիրէ նաեւ այդ եզրայնագումները:

«Եթէ ուսումնասիրութիւններ են արել, ապա մենք պետք է նաեւ հասկանանք, թէ ինչ խորութեամբ: Եթէ ուսումնասիրութիւնների արդիւնքն այն է, որ, ըստ էութեան, պատասխանատուութեան ենթարկուած մարդ չունենք, ուրեմն այդ ուսումնասիրութիւններն արուել են զաղտնի պահելու համար: Այդ դէպքում շահառուն ո՞վ է, անձամբ կ'ուսումնասիրեն պրն. Օհանեանի կատարած աշխատանքը, եւ յանձնաժողովի անդամներով կը ծանօթանանք դրանց: Ակնկալում եմ, որ այսօրուայ Պաշտպանութեան նախարարութեան դեկավար անձնակազմը կը սկսի հարստացնել Սէյրան Օհանեանի սկսած

ուսումնասիրութիւնները», - աւելցուց Անդրանիկ Քոչարեանը:

Դիտարկման, որ Ապրիլեան պատերազմի ժամանակ մարդկային կորուստներու հարցին զուգահեռ տարածքային կորուստներ եղած են, այս հարցը պիտի քննեն յանձնաժողովին մէջ, Անդրանիկ Քոչարեանը պատասխանած է. «Օրակարգային հարցերու մէջ կորուստները ոչ միայն մարդկային են, այլ նաեւ տարածքային: Չկասկածէք, որ մենք ուսումնասիրելու ենք նաեւ տարածքային կորուստների պատճառները»: Ան աւելցուցած է, որ յանձնաժողովի աշխատանքի արդիւնքով պիտի կազմուին գեկոյցներ՝ չբացառելով, որ անոնք կրնան քրէական գործերու հիմք դառնալ:

Ըստ Քոչարեանի՝ գոհերու հարգատեանի որ ծառայակից ընկերները պիտի ըլլան իրենց հիմնական ուսումնասիրութեան շրջանակի մէջ, քանի որ մեծ տեղեկատուութեան կրողներ են:

Էրտողանի Քաղաքական Աշունը



ՃՐՏԳ. ՀԱՄԲՈՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Կը թուի, թէ Թուրքիոյ երազ-կոտ սուլթան Ռեջեփ Թայիփ Էրտողանը սկսած է իր քաղաքական կեանքի աշունը ապրելու: Ան Ապտուլլահ Կիլիշի, Ահմետ Տաութօղլուի եւ այլ կուսակցական ընկերներու օգնութեամբ, ինչպէս նաեւ իր նախկին բարեկամ եւ ներկայի թշնամի Ֆեթհուլլահ Կիլիշի հետ գործակցութեամբ, Թուրքիոյ ղեկավարութիւնը ստանձնեց ու դարձաւ երկրին ամենաազդեցիկ անձը, ապա քուէներու անհրաժեշտ թիւը ապահովելով փոխեց Թուրքիոյ սահմանադրական օրէնքները եւ նախկին նախարարական վարչակարգը վերածեց նախագահականի՝ դառնալով Թուրքիոյ բռնակալը:

Թուրքիոյ տնտեսական վիճակը վերակենդանացաւ Էրտողանի քաղաքական աճին հետ, ան բազմաթիւ ծրագիրներ իրականացուցարդէն եւ նախատեսած էր իրականացնել կարգ մը ուրիշ ծրագիրներ, սակայն անոնք յանկարծակի դադրեցան, երբ համաշխարհային դրամատուներէն Թուրքիոյ ստացած հսկայ փոխառութիւնները վերադարձնելու ժամկէտը հասաւ, զանոնք պէտք էր ստլարով կամ եոլրոյով վճարել: Երկիրը մեծ ճգնաժամի մատնուեցաւ, որովհետեւ իրականացուած ծրագիրները մեծամասնութեամբ հասութեաբեր չէին (չէնքեր, հիւրանոցներ, պողոտաներ, կամուրջներ, Էրտողանի նոր պալատը, եւ այլն): Միւս կողմէ, Թուրքիոյ լիբան շարունակեց արժեզրկուիլ՝ քաղաքական եւ տնտեսական այլ պատճառներով: Թուրքը եւ օտար տնտեսագէտներ, ի միջի այլոց՝ հայազգի տնտեսագէտ Տարօն Աճէմօղլու, նախապէս վերլուծած էին երկրին տնտեսական

վիճակը եւ ազդարարած սպասուելիք տագնապին մասին, սակայն Էրտողան, իր օսմանեան ամբարտաւանութեամբ՝ անոնց խորհուրդին ականջ չտուաւ:

Արդարեւ, Էրտողանի քաղաքականութեան վայրէջքը սկսաւ տարիներ առաջ: Ան, երբ երկրին ղեկը ստանձնեց, պէտք էր որ իր աջակիցներուն բաժին տար. Կիլիշի աջակցութիւնը Էրտողանին, վերջինիս սեւ աչքերուն համար չէր, երբ ան եւս ուզեց իր մասնակցութիւնը բերել Թուրքիոյ քաղաքական կեանքին ու իր բաժինը պահանջեց երկրի տնտեսական ծրագիրներէն, անոնց կեղծ մեղրալուսինը վերջ գտաւ եւ անոր յաջորդեց յեղաշրջում մը, որուն ետին կանգնողը մինչ օրս յայտնի չէ թէ իսկապէս ո՞վ էր: Սակայն Էրտողան ի շահ իրեն օգտագործեց պատահածը՝ իր քաղաքական ընդդիմադիրները բանտարկելով, անոնց շարքին ըլլալով ռազմական եւ ռատիկանութեան տարբեր ու բարձրաստիճան պաշտօնեաներ, սպաներ եւ օդաչուներ: Զինուորականներէ բացի, Թուրքիա կորսնցուց մեծ թիւով փրօֆեսէօրներ, մտաւորականներ, գրողներ, լրագրողներ, ուսուցիչներ եւ միջին դասի աշխատաւորներ, որոնք հսկայական մարդուժ կը ներկայացնէին հասարակութեան մէջ:

Երբ Էրտողան յաջողեցաւ իր դիրքերը ամրապնդել եւ իր կասկածելի թշնամիները արմատախիլ ընել, ան Թուրքիոյ եւ Սուրիոյ բոլոր քիւրտերը թշնամիներ եւ PKK-ի անդամներ համարեց: PKK-ը Թուրքիոյ մէջ քիւրտերու իրաւունքներուն համար կը պայքարի, սակայն արեւմտեան երկիրները այդ կուսակցութիւնը ահաբեկչական խումբ կը համարեն՝ միաժա-

մանակ անտեսելով Էրտողանի կողմէ կատարուած բոլոր վայրագութիւնները քիւրտերուն հանդէպ: Էրտողան, իւրաքանչիւր օր, հարիւրաւոր քիւրտեր կը սպաննէ երկրի արեւելեան եւ հարաւային հատուածներուն մէջ, կը կործանէ անոնց գիւղերն ու քաղաքները եւ կ'աքսորէ զանոնք երկրի ապահովութեան պատրուակով: Այնուամենայնիւ, աշխարհի մեծ պետութիւններու քաղաքական կեղծաւորութիւնը եւ տնտեսական շահերը երբեք թոյլ չեն տար, որ Էրտողանի այս յանցագործութիւնները դատապարտուին. նոյնիսկ միջազգային լրատուական միջոցները եւ թերթերը հագուաղէպօրէն կ'անդրադառնան այս բոլորին:

Պատմութիւնը կը կրկնուի: Ժամանակին սուլթան Ապտուլ Համիտ Բ. հարիւր հազարներով հայեր ջարդեց: 1915-1918 տարիներուն «Իթ-թիհատ վէ Թարրաքի» կուսակցութեան երեք ղեկավարները՝ Թալէաթ, Էնվեր եւ Ճեմալ, Հայոց Յեղասպանութիւնը կազմակերպեցին եւ յաջողեցան քիւրտերը օգտագործել՝ իրենց ծրագիրները իրականացնելու համար, թէեւ եղան քանի մը հեռատես քիւրտ ցեղապետներ, որոնք գալիք վտանգը գուշակելով՝ չմասնակցեցան այդ աղէտներուն: Այժմ, օսմանցիներու թողը եւ նոր սուլթանական դրօշը կրող Էրտողան, իր նախնիներու ճանապարհէն քայլելով՝ քիւրտերը կը կոտորէ: Ո՛ւր են մարդու իրաւունքները եւ ճնշուած ժողովուրդներու պաշտպան արեւմտեան պետութիւնները:

Էրտողան Թուրքիան նաեւ անջատած է աշխարհի միւս երկիրներէն: Արդարեւ, ներկայիս իր միակ բարեկամը Քաթարի շէյխ Թեմիմ պըն Համեսն է, որ իր կարգին մեկուսացուած է իր արաբ եղբայրներուն կողմէ: Էրտողանի մտերիմ ընկեր՝ Սուտանի նախկին բռնակալ նախագահ Օմար Պեշիրը, իր ժողովուրդին կողմէ տապալուեցաւ. իսկ Լիպիոյ պարագային, զօրավար Խալիֆա Հաֆթեր իր գորքը Թրիփոլի մղելով՝ Էրտողանի «խլամ եղբայրներ»ը չէզոքացուց: Թուրք-

իա-Ռուսիա բարեկամութիւնը առեւտուրի խնդիր է, եւ որեւէ կասկածելի մօտեցում Էրտողանի կողմէ նախկին սովետական իսլամ երկիրներուն հետ՝ կրնայ խանգարել այդ բարեկամութիւնը, ինչպէս եղաւ Չինաստանի պարագային, երբ Էրտողան պաշտպանեց Չինաստանի «Այդուր» իսլամներու ապստամբութիւնը:

Երկրէն ներս, Էրտողան պարտուեցաւ տեղական ընտրութիւններուն, ապա ճնշում բանեցուց պատասխանատուներուն վրայ՝ Պոլսոյ մէջ ընտրութիւնները կրկնելու համար, եւ այդպիսով, ան կորսնցուց իր քաղաքական հեղինակութիւնը:

Երկրէն դուրս, Միացեալ Նահանգներու նախագահ Թրամփ կը սպառնայ պատժամիջոցներ կիրառել Թուրքիոյ հանդէպ, եթէ ան չեղեալ չհամարէ ռուսական «SS-400» հրթիռներ գնելու համաձայնութիւնը. աւելին, ան պիտի չարտօնէ Թուրքիոյ մասնակցութիւնը ամերիկեան ռազմական առաջատար «F-35» ինքնաթիռներու արտադրութեան աշխատանքներուն. տակաւին կան ՆԱԹՕի պատիժները...

Եւրոպայի մէջ, Էրտողան իր յարաբերութիւնները «պղպաղ պատերազմ»ի վերածեց, երբ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն որոշեց Ապրիլ 24ը իբրեւ սուզի օր նշել Ֆրանսայի մէջ, իսկ Իտալիոյ ու Փորթուկալի խորհրդարանները ընդունեցին Հայոց Յեղասպանութիւնը. Էրտողան՝ գայրացած, յայտնեց, թէ 1915ի հայերու տեղահանութեան որոշումը ճիշդ որոշում էր, եւ թէ ինք պատրաստ է նոյնը ընել այսօր, նման պայմաններու մէջ: Ան արդէն որոշած է նոյնը ընել քիւրտերուն հետ:

Այս բոլորէն ետք, դէպի ո՛ւր կ'երթայ երազկոտ «սուլթան» Էրտողանը...

Հաստատաբար, ան իր քաղաքական վերջին ժամանակաշրջանը կ'ապրի եւ իր վախճանին կը մօտենայ, սակայն՝ ծանր քայլերով, եւ ի վերջոյ, ան իր գահէն վար պիտի տապալի իր իսկ ժողովուրդին ձեռամբ:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
 ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՎԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

We will continue to stand by your side and secure your **family** and **business** with our full range of insurance policies.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

(818) 500 9585

805 E. Broadway, Glendale, CA 91205
sbmaronian@gmail.com
CA INSURANCE LICENSE # 0C99815

MaronianInsurance.com



HEALTH




LIFE



COMMERCIAL

Արցախի նախագահը ընդունած է ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակեանը



Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակեանը 3 Յունիսին հանդիպում ունեցած է Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) նախագահ Պերճ Սեդրակեանի եւ անոր գլխավորած պատուիրակության անդամներուն հետ:

Հանդիպման ժամանակ քննարկուած են Արցախի մէջ շարք մը ծրագիրներու իրականացման առնչուող հարցեր:

Նախագահ Սահակեանը բարձր գնահատած է ՀԲԸՄ-ի աշխույժ մասնակցութիւնը Արցախի ընկերային-տնտեսական զարգացման, միջազգային ճանաչման եւ համագործակցութեան խնդիրներու լուծման գործին:

Նախարար Յակոբ Արշակեան

Շարունակուած էջ 1-էն

ըրկահայ Գիտնականներու կազմակերպութեան, Հայ Արհեստավարներու Ընկերակցութեան եւ «Արփա» հիմնարկին:

Այնուհետեւ ելոյթ ունեցաւ նախարար Յակոբ Արշակեան: Ան ամփոփ գիծերու մէջ, նկարագրեց թաւշեայ յեղափոխութենէն ետք Հայաստանի կառավարութեան արձանագրած ժողովրդանուէր ձեռքբերումները: Առանձնաբար նշեց նաեւ դատական համակարգին ներս իրագործուելիք բարեփոխումներուն եւ այլ բնագաւառներու մէջ տեղի ունեցած յառաջընթացի մասին: Ժողովրդային յեղափոխութեան իրագործումներէն կարեւորագոյններէն մին պիտի ըլլայ տնտեսական յեղափոխութեան իրականացումը, որուն համար առանձին առաքելութիւն մը վիճակուած է իր նախարարութեան:

Նախարար Արշակեան գիտաթեքնիքական բնագաւառներու յառաջընթացին համար կարեւորութեամբ ընդգծեց նաեւ սփիւռքի մասնակցութիւնն ու գործնական ներդրումները, քանի որ նման մասնակցութիւն մը կրնայ մեծապէս սատարել երկրի ընդհանուր յառաջընթացին եւ բնակչութեան կենսամակարդակի բարձրացումին: Իր խօսքի աւարտին՝ ընդգծեց. «...Մեր սիրտերը բաբախում են միասին»:

Շաբաթ, Յունիս 1-ի կէսօրէ ետք ժամը 2:00ին կենտէլի «Հիլթըն» հիւրանոցի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ ընդարձակուած ժողովրդային հանդիպում մը նա-

խարար Յակոբ Արշակեանի հետ: Սոյն հաւաքին ներկայ էին հայ մամուլի եւ հասարակութեան տարբեր հատուածներու շուրջ 200 հրաւիրեալներ, մեծ մասամբ գործարարներ, արդիւնաբերողներ եւ առեւտրական զանազան հաստատութեան ներկայացուցիչներ:

Օրուան հանդիսավարն էր Լոս Անճելոսի մօտ Հայաստանի աւագ հիւպատոս-դեսպան Պրն. Արմէն Բայբուրդեան: Յաջորդաբար ելոյթներ ունեցան առեւտրական եւ արդիւնաբերական ու գիտա-թեքնիքական հիմնարկութիւններու ներկայացուցիչներ, որոնք իրենց պատկերացումն ու առաջադրանքները ներկայացուցին Հայաստանի ընդհանուր յառաջընթացին համար:

Այստեղ եւս ելոյթ ունեցաւ նախարար Արշակեան: Ան ընդհանուր առմամբ բնութագրեց երկրին ներս ծրագրուած օգտաշատ փոփոխութիւններն ու յառաջիկայի մարտահրաւէրները գիտակալելու առաջադրանքները: Աւարտին տեղի ունեցան շահեկան հարցադրումներ, որոնց համար արուեստագործները պատասխաններ:

Կը շնորհաւորենք վերոյիշեալ նախաձեռնութեան հեղինակ Հայաստանի աւագ հիւպատոսութիւնը եւ յաջողութիւն կը մաղթենք յառաջիկայ աշան, Հայաստանի մէջ գուարմուելիք Տեղեկատուութեան արհեստագիտութեան համարչխահային համագումարին (World Congress on (information technology) որուն պիտի մասնակցին 60 երկիրներէ ժամանած 200 պատուիրակներ:

Ապրիլեան Պատերազմի Հետքերով

Շարունակուած էջ 1-էն

Մեր կատարուելին՝ յառաջիկային նոյն կացութիւններու առջեւ չգտնուելու համար: Եթէ այդ բոլորը կատարուած են, սակայն մնացած են հանրութեան գաղտնի, այդ բաւարար չի կրնար համարուիլ:

Ի՞նչ կը վերաբերի պետական գաղտնիքներ չիրապարկանացնելու մտահոգութիւններուն, Յանձնա-

ժողովի նիստերը առայժմ տեղի կ'ունենան դռնփակ, որոշ հանգրուանէ մը ետք արդիւնքներու մասին հասարակութեան տեղեկացնելու համար:

Ապրիլեան պատերազմի հանգամանքներու ուսումնասիրութիւնը եւ անուցմէ դասեր քաղելը այն նուազագոյնն է, որ պէտք է կատարուի: Հայաստանը այդ մէկը պարտական է իր նահատակ զինուորներուն:

«ՄԱՍԻՍ»

ՀԿԲՄ Սկսած է Ընդունիլ Կրթաթոշակներու Դիմումնագրեր

Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը (ՀԿԲՄ) ուրախ է յայտնելու որ, սկսած է ընդունիլ ուսանողական կրթաթոշակներու դիմումնագրեր: 2019-2020 դպրոցական տարեշրջանի համար: Նպաստներ պիտի յատկացուին, իւրաքանչիւրը 1500 տոլարի գումարով, հինգ ուսանողներու, որոնք կը յաճախեն Միացեալ Նահանգներու տարածքին գործող եւ հաւատարմագրուած գոյէջներ կամ համալսարաններ:



Դիմողները պէտք է ունենան հայկական ծագում, կրնան հաստատել իրենց կարիքաւոր ըլլալը, ունին նուազագոյնը 3.3 GPA եւ գործունեայ են հայկական համայնքին ներս:

Այս պայմանները լրացնող ուսանողները կրնան այցելել AEBU.org կայքը՝ յաւելեալ տեղեկութիւններ եւ դիմումնագրեր ստանալու համար:

Դիմումնագրերը կրնան ներկայացուիլ մինչեւ Յունիս 30, 2019, առցանց եւ կամ նամակատան միջոցաւ՝ ուղարկելով հետեւեալ հասցէին.

AEBU Scholarship Committee, 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

ՀԿԲՄ իր տարեկան նպաստները պիտի յատկացնէ մրցակցական հիմունքներով եւ վերանայումէ ետք: Նպաստները պիտի տրուին բարձրագոյն առաջին հինգ ուսանողներուն: Արդիւնքները պիտի յայտարարուին Յունիս 2019-ի աւարտին, մեր կայքէջի վրայ եւ էլ-նամակով.

Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը հիմնուած է 1969-ին խումբ մը նուիրեալներու կողմէ, որոնք հաւատացած են կարիքաւոր ուսանողներուն օգտակար դառնալու առաքելութեան: Մենք կը հաւատանք, որ ուսանողական նպաստները կարեւոր ներդրումներ են մեր երիտասարդներու կրթութեան կերտելու համար աւելի փայլուն ապագայ մը:

ՀԿԲՄ Քալիֆորնիոյ մէջ հաստատուած բարեսիրական կազմակերպութիւն է եւ ունի ոչ հասութաբեր section 501 (c) (3) Internal Revenue Code, Tax ID # 95-3798531 կարգավիճակ:



Իր 40-րդ Տարեդարձին առիթով
ՀԲԸՄ ՍԱԹԱՄԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ
 (ՆԱԽԱՊԵՍ ԱՐՏԱԿԱԶՂ)
 Կը ներկայացնէ՝

ՓԱՐԱՏԻՍՕ ՊԱՆԴՈՒԿ

Կատակերգութիւն երեք արարով

Գեղիմայ՝
 ժՈՐժ ՖԵՅՏՕ ԵՒ ՄՈՐԻՍ ՏԵՎԱԼԻԵՐ
 Բեմադրիչ՝
 ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ

In Celebration of the 40th Anniversary of Its Founding
AGBU SATAMIAN THEATRE GROUP
 (FORMERLY ARDAVAZT)
 presents

HOTEL PARADISO

A comedy in 3 acts by
GEORGES FEYDEAU and MAURICE DESVALIERE
 Directed by
KRIKOR SATAMIAN

ՅՈՒՆԻՍ 15-16 / 22-23, 2019 **JUNE 15-16 / 22-23, 2019**
 ՀԲԸՄ Վաչէ եւ Թամար Մանուկեան
 Կատարողական Արուեստից Կենտրոնին Մէջ
 2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104
 Շաբաթ օրերը ժամը 8:00-ին, Կիրակի 6:00-ին
 AGBU Vatche & Tamar Manoukian
 Performing Arts Center
 2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104
 Saturday performances at 8:00 pm, Sundays at 6:00 pm

Տոմսերը կարելի է ապահովել / Tickets available at:
WWW.AGBUPAC.ORG/CALENDAR
 Մուտքի Լուր / Donation \$30

Ներկայացուած ԵՆ Արեւմտահայ Կանանց Մասին Ուսումնասիրութեան Արդիւնքները



ՀՀ վարչապետի տիկին, «Իմ քայլը» եւ «City of smile Ժպիտաներու քաղաք» բարեգործական հիմնադրամներու հոգաբարձուներու խորհուրդի նախագահ Աննա Յակոբեան Մայիս 27-ին հիւրընկալած է Մասաչուսէթսի արհեստագիտական համալսարան եւ հետազոտական կեդրոնի (MIT) փրոֆէսոր Լեոնա Էքմեքչիօղլուն, Քլարք համալսարանի ցեղասպանութիւններու եւ հոլոքոստի ուսումնասիրութիւններու Սթրեյքեր կեդրոնի դոկտորանտ Աննա Ալեքսանեանը, Հայաստանի ամերիկեան համալսարանի փրոֆէսոր Մելիսա Պիլալը, Հայաստանի ամերիկեան համալսարանի Հումանիտար եւ հասարակական գիտութիւններու բաժանմունքի համակից փրոֆէսոր Հուրիկ Աղդարեանը, ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարի տեղակալ Լուսինէ Առաքէլեանը: Ինչպէս «Հայերն այսօր»-ին կը յայտնեն Աննա Յակոբեանի գրասենեակէն, հանդիպման Լեոնա Էքմեքչիօղլուն եւ Մելիսա Պիլալը ներկայացուցած են հայ կանանց նուիրուած իրենց ուսումնասիրութիւններու արդիւնքները, որոնք կը փաստեն, որ ինչպէս պատմութեան տարբեր փուլերու մէջ, այնպէս ալ յատկապէս Ցեղասպանութեան ժամանակ հայ ազգի փրկութեան եւ վերածնունդի գործին մէջ կանանց դերակատարումը եւ ազդեցութիւնը եղած է հսկայական եւ որոշիչ:

Յակոբ Յակոբեանի «Բակունց քոյրերը» մի տեսակ գրոց-պատմութիւն է երկու քոյրերի միջեւ, ամբողջ գրուած քի վլխաւոր հերոսները նրանք են, որոնց երկխօսութիւնների (Dialod) միջոցով վեր են հանում լենինականից 15 տարի առաջ արտագաղթած բազմանդամ ընտանիքում տեղի ունեցող բոլոր իրադարձութիւնները: Ամբողջ գիրքը կառուցուած է հարց ու պատասխանի վրայ: Ծայրէ-ծայր երկխօսութիւններ ամէն տեղ՝ մեքենայում, տանը, ռեստորան-սրճարաններում եւ այլուր: Այդ կենդանի, շարժուն գրոցն է, որ գրաւիչ եւ հաճելի է դարձնում երկի բովանդակութիւնը՝

Եւ այդ ամէնը քոյրերը պատմում են պարզ, առօրեայ խօսակցական լեզուով, որի պատճառով էլ, շատ անգամ արտաբերում են օտար բառեր, ինչպէս օրինակ՝ Մտրես, Դիւան, լոտարիա, Կլուբ, եւ այլն: Յակոբ Յակոբեանին խորթ են դժուարամարս բառերի ու արտայայտութիւնների գործածութիւնը:

Բառամթերքի ճոխութիւն մի փնտռէք նրա մօտ: Ամէն ինչ պարզ է ու յստակ, հասանելի ամէն մի սովորական ընթերցողի համար:

Միայն ցաւով պիտի նշել, որ Յակոբ Յակոբեանի գիրքը չէ անցել իսկական իմբազրի ձեռքով: Հրատարակչութեան իմբազրի Արմինէ Ծատուրեանի մեղքը չէ սա: Նրա պարտականութիւնը բոլորովին այլ է (էջադրում, տողերի հաւասարեցում, հաւասար տողաքանակ ամէն մի էջում, եւ այլն): Նա պարտաւոր է սրբագրութիւններ անել, դա՛ իսկական, վաւերական գրողի պարտականութիւնն է:

Այս ամէնով հանդերձ, Յակոբ Յակոբեանի «Բակունց քոյրերը» գիրքն ընթերցուում է հաճոյքով: «Բակունց քոյրերը» կոչ է, ահագանք նաեւ, յորդոր՝ վերադարձ դէպի Հայրենիք, մէկտեղուելու ձգտում՝ հանուն պապերի թողած աւանդութիւնների:

Այս իմաստով չափազանց բնորոշ է Բակունց քոյրերի մօր, բնիկ լենինականցի Մանիկ մայրիկի՝ հարազատներին ուղղուած խօսքը, որ նա արտասանում է իր համար մշտապէս հարազատ լենինականցու բարբառով.

- Ընչի՞ բերիք ընձի քցիք էս բուջախն ու բոլորդ ցրիւ էղաք. Մէգդ՝ Արիգոնը, էն մէգելը՝ Մանֆրանցիսկ, իսկ դու էլ մթոմ ընձի մօղիկ կապրիս հա՛: Տարին մէ անգամ հազիւ ձնծաղկի պէս ծլես գը: Ըստեղ չարխը թարս կը ֆրու-ուա՛յ աղջիկ ջա՛ն, հա՛..., սաղըդ 15 տարուայ մէջ ուրիշ մարդ դառաք, հա՛..., էս ի՞նչ բան է, չեմ հասկընայ, աւելի լաւ կ'եղնի թող-նիմ ձեզ ըստեղ, ու էրթամ իմ Գիւմրիս:

Մտածելու, խորհելու, շատ երեւոյթներ ծանր ու թեթեւ անելու առաջադրանք կայ ընթերցողին ուղղուած՝ Յակոբ Յակոբեանի «Բակունց քոյրերը» վէպում: Արժէ մտածել այդ մասին: Անպայման կարդացէք այդ գիրքը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցի
 Ընկերային Օժանդակ Յանձնախումբը
 Սիրով կը հրաւիրէ ձեզ տօնելու

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏԸ

> Համեղ ձաշ
 > Տեսաերկզի ցուցադրութիւն

Սր. Ներսէս Ընծայարանի մասին, որ պատրաստած է աւելի քան 43 եկեղեցականներ, որոնցմէ 4ը եպիսկոպոս

Կիրակի, Յունիս 9, 2019, կ.ե. ժամը 1:00ին
 Ս. եւ Աննահ պատարագէն ետք

Ձեր տեղիքը ապահովելու համար դիմեցէք
 Այխա - (818) 606-6606
 Քրիս - (626) 201-2704
 Վերս - Եկեղեցոյ գրասենեակ (626) 449-1523

Մուտքի նուէր: \$10 նախօրօք
 \$12 Մուտքին
 Երեւաններուն: \$7

Տօն Համբարձման Քրիստոսի Մայիս 30, 2019 578-ամեակ Մայր Աթոռի Սիսեւն Էջմիածին Վերադարձի (1441-2019)

ԴՈՎՏ. ՋՍԻԵՆ Ա. ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ


Տարեդարձը

Որպէս յիշատակելի իրադարձութիւն Ամենայն Հայոց Տ.Տ. Գէորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1945 թուի Ազգային-Եկեղեցական Ժողովի որոշմամբ Քրիստոսի Համբարձման Հինգշաբթին Մայր Աթոռի Սիսեւն Էջմիածին վերջնական վերադարձի յիշատակութեան օր հաստատեց որպէս համազգային տօն՝ հաստատ թուականով ու կ'անցընէր զայն հայաստանեայց եկեղեցւոյ տօնացոյցին մէջ: Ան նաեւ Հայրապետական Մաղթանք կատարելու հրահանգն ալ կը կցէր հաղորդագրութեան: Յիշեալ ժողովը նկատի ունենալով Էջմիածնի մէջ 1441-ին ընտրուած Կիրակոս Վիրապեցի Կաթողիկոսի օժման համբարձման Հինգշաբթի օրը, չարմարագոյն օրը նկատեց յիշատակել Աթոռի վերջնական փոխադրութիւնը Ս. Էջմիածին:

Ազգային-Եկեղեցական Ժողովը

Երկար յապաղումէ ետք, երբ արդէն նախորդ նահատակ Տ.Տ. Խորէն Ա Մուրատեկեան Կաթողիկոսի 1938 թուի վախճանումէն անցեր էին եօթ տարիներ, 1941 թուի ժողովն ալ թերաւարտ կը մնար ուր միայն Ազգայնորդ Տեղակալ կրնային ընտրել Տ.Տ. Գէորգ Արքեպիսկոպոս Չորեքճեանը: Սովետական կարգերու անհանդուրժող սեղմումները առիթ չէին տար սփիւռքէն եպիսկոպոսներ եւ պատգամաւորներ հրաւիրել եկեղեցական ժողովի համար: Կը մնար սակայն անդրդուելի Չորեքճեան Արքեպիսկոպոսին մեծ դիւանագիտութիւնը որ անձամբ Քրեմլինի մէջ պիտի յաջողէր բռնակալ Ստալինի մօտ երթալու, տեսակցելու իր հետ եւ արտօնութիւն ստանալու 1945 թուի Յունիսի 15-25 Ազգային-Եկեղեցական Ժողով գումարելու եւ ընտրելու Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Չմոռնանք այստեղ յիշելու այն բացառիկ օժանդակութիւնը «Մասունցի Դաւիթ» անունով 22 հրասայլերուն որոնք համաշխարհային երկրորդ պատերազմին նուիրուեցան Կարմիր Բանակին Չորեքճեան Արքեպիսկոպոսի ջանքերով յանուն հայ ժողովուրդին, որուն բարերար հետեւանքը եղան թէ՛ ժողովին գումարումն ու թէ՛ Հայրապետական Ընտրութիւնը, ի շարս այլ արտօնութեանց: Գէորգ Արքեպիսկոպոս դիմած էր արտասահման ու խնդրած նուիրահաւաք



Կատարել այդ տարօրինակ նպատակին համար:

Ժողովին կը նախագահէր նորընտիր Մեծի Տանն Կիլիկիոյ գիտնական Հայրապետ Տ.Տ. Գարեգին Ա Յովսէփեանց Կաթողիկոսը որ հայ եկեղեցւոյ պատմութեան մէջ առաջին Կիլիկեան Աթոռի գահակալը պիտի ըլլար որ Անթիլիասէն Մայր Աթոռ պաշտօնական այցելութեան կ'երթար: Հայրապետը անձամբ պիտի նախագահէր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան եւ օժէր իր Գէորգեան ձեմարանի երբեմնի դասակիցը որ պիտի դառնար Տ.Տ. Գէորգ Զ. Չորեքճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Տարեդարձ Վերադարձի

Հայրապետական ընտրութեան անձաջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը ժողովին որդեգրել կուտար այն առաջարկը որ 1945 տարին պիտի յայտարարէր որպէս «Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռի վերահաստատման տարի», ընթացք տալով Յունիս 16-ի երկրորդ նիստին պատգամաւոր Ակադեմիկոս Ստեփան Մալխասեանի կողմէ եղած գրաւոր առաջարկին, ուր կ'ըսուէր «պաշտօնապէս նշել Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռին վերադարձը Սիսեւն Վարդապատ-Էջմիածին՝ 1441 թուին»: Աթոռը Սիս փոխադրուած էր 1292 թուականին ուր կը մնար 149 տարիներ:

Հայրապետական Աթոռը մօտ 1000-ամեակ մը, 484 թուականէն սկսեալ Էջմիածնէն դուրս կը մնար, որուն կէս շրջանը՝ Դուրիսի մէջ (484-928) Էջմիածնի մօտիկ, եւ անկէ Բագրատունեաց եւ Ռուբինեանց թագաւորութեանց ներքեւ, նախ Անիի եւ ապա Կիլիկիոյ մէջ, մինչեւ 1441: Թուականները նկատի ունենալով 75 Ամենայն Հայոց Կաթողիկոսներ Էջմիածնէն դուրս հաստատեցին Աթոռը՝ սկսեալ Յովհաննէս Ա Մանդակունիէն մինչեւ

Գրիգոր Թ Մուսաբեկեան, քաղաքական պարագաներու հետեւանքով երբ Բագրատունեաց Անիի, եւ Ռուբինեանց Կիլիկիոյ հայ թագաւորութիւնները գլուխն անցան հայ ազգին ու աւելի ապահով դարձուցին Մայր Աթոռի գոյատեւումը: Սակայն Հայաստանի մէջ ամրակուռ կը հսկէին Արեւելեան Վարդապետները իրենց հարազատ վանքերուն եւ ուսումնարաններուն մէջ այն հաստատ համոզումով որ Մայր Աթոռի վայրը Լուսաւորչահաստատ Սուրբ Էջմիածինն էր ուր ան պէտք է վերադառնար:

Անդրանիկ Կոնդակը

Նորընտիր Տ.Տ. Գէորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսը օծում կը ստանար 1945-ի Յունիսի 24-ին ձեռամբ Կիլիկիոյ Գարեգին Ա Կաթողիկոսին եւ մասնակցութեամբ հինգ արքեպիսկոպոսներու՝ Գէորգ Արլանեան, Կարապետ Մազլումեան, Արտաւազդ Սիւրմէեան, Մամբրէ Սիրունեան եւ Մամբրէ Գալֆայեան Սրբազաններու:

Հայրապետական իր առաջին Կոնդակը գրաբար լեզուով կը գրէր 1946 Ապրիլ 1 թուակիր, ուր կ'անդրադառնար Մայր Աթոռի պատմական վերիվայրումներուն, աստանդական կայքերուն, հրահանգելով միանգամայն տօնական հանդէսներով նշելու դարադարձը, ըսելով «Դարք հինգ եւ տարիք հինգ անգին ի վերայ» Հայրապետութեան Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութենէն ի վեր:

Հայրապետը իր Կոնդակին մէջ Աթոռին վերջին տեղափոխութիւնը դէպի Սիս կը նկատէր «կարի աղէտալի», մասնաւոր 1375 թուի Կիլիկեան թագաւորութեան վերջնական անկումէն ետք: Հայրապետը կը նշէր նաեւ որ Կիլիկիոյ թագաւորութեան ընթացքին վեհապետներ «նոյնիսկ ուրացան» իրենց մայրենի եկեղեցին եւ «յայտնապէս ընկալան գղաւանութիւն եկեղեցւոյ Հռոմայ», հակառակ աթոռակալ Կաթողիկոսներու անվերջ ջանքերուն ինքնանկախ պահելու համար իրենց հոգեւոր վերին իշխանութիւնը, յատկապէս Պահլաւունի եւ Շնորհալի Հայրապետներու օրով 12-րդ դարուն, երբ Հայ Եկեղեցին իր ամենէն ծաղկեալ եւ արդիւնաւէտ տարիները կը բոլորէր Գրիգոր Վկայասէրի եւ Ներսէս Շնորհալի Կաթողիկոսներու շրջանին: Կոնդակը կը փակէր Համբարձման տօնի Հինգշաբթի օր կատարելու յիշատակութիւնը, զայն «Ազգային Տօն» հռչակելով:

1441 Թուի Էջմիածնի Ժողովը

Մայր Աթոռի մերձ հագարամեայ աստանդական թափառումները վերջ գտան 1441 թուին շնորհիւ Արեւելեան Վարդապետներու ներքին աշխոյժ աշխատանքին եւ յատկապէս երբ Կիլիկեան թագաւորութիւնը վերջ գտած էր 1375 թուին ու Մայր Աթոռի դիրքը զգալիօրէն տկարացած: Հա-

յաստանի հողին վրայ ծաղկած վանքերն ու ուսումնարանները՝ Սիւնեաց Նորավանքի, Հաղբատ-Մանահինի, Գլաձորի եւ Տաթեւի, կը տեսնէին Մայր Աթոռի վերահաս վտանգը Կիլիկիոյ մէջ եւ անհրաժեշտ կը նկատէին փրկելու Հայ Եկեղեցին: Արեւելեան Վարդապետները որոշեցին 1441 թուականին Վարդապատ-Էջմիածնի մէջ Համազգային Ժողով մը գումարել ու որոշել Մայր Աթոռի վերադարձը, ինչպէս նաեւ Սիսի մէջ նստող վերջին Ամենայն Հայոց Գրիգոր Թ Մուսաբեկեան Կաթողիկոսը հրաւիրել իր կաթողիկոսական իշխանութեամբ բազմելու Էջմիածնի հարազատ վայրին մէջ:

Յիշեալ ժողովին Վարդապատ Ժամանած էին եկեղեցական եւ աշխարհական ներկայացուցիչներ ու «միաբան հաւանութեամբ ամենեցուն հաստատեցաւ» Մայր Աթոռը իր հարազատ վայրը վերադարձնել: Եւ սակայն, հակառակ տրուած նախապատուութեան, Սիսի Գրիգոր Թ Մուսաբեկեան վերջին Ամենայն Հայոց Կաթողիկոսը (1439-1441), առանց հակառակելու ժողովի առած որոշումին, չկամեցաւ Էջմիածնի վերադառնալ շարունակելու համար իր հայրապետութիւնը: Ժողովը հետեւաբար կաթողիկոսական ընտրութիւն կատարելով ընտրեց եւ օժեց Կիրակոս Խորվիրապեցի որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց:


Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը

Կիլիկիոյ մէջ իր մասնակի կաթողիկոսութիւնը վարեց նոյն Գրիգոր Թ Կաթողիկոսը ուր սկիզբ առաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը որուն համամիտ եղաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, եւ յարաբերութիւններ առ հասարակ բնականոն մնացին երկու Աթոռներուն միջեւ, միշտ Էջմիածնի նախամեծար Մայր Աթոռի հանգամանքը չարգելով: Սիսի Կիլիկեան Կաթողիկոսութիւնը Կիլիկիա մնաց ժԱ դարէն մինչեւ ԺԵ դար (1066-1441), իսկ մայրաքաղաք Սիսի մէջ ճիշդ 149 տարի (1292-1441), Գրիգոր է Անաւարգեցի Կաթողիկոսէն մինչեւ Գրիգոր Թ Մուսաբեկեան Կաթողիկոս մէկուկէս դար Սիս մնալով, երբ Աթոռը քաղաքական եւ ներքին տագնապներ սկսաւ դիմազարուել:

Սիսի մէջ կաթողիկոսներ իրարու յաջորդեցին եւ պահեցին տեղական Աթոռին գնացքը Աջապահեան կաթողիկոսներու սերունդներով: Նոյն տարիներուն 1461 թուին ստեղծուեցաւ նաեւ Սուլթանական Թուրքիոյ կողմէ Հայոց Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը որ եղաւ Թուրքիոյ հայոց հոգեւոր եւ վարչական կեդրոնը որուն հովանիին տակ անցաւ նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որքան ատեն որ պետութիւնը պաշտօնապէս կը ճանչնար միայն Հայոց Պատրիարքութիւնը որպէս հայ փոքրամասնութեան կեդրոնը:

Ստացուած Գիրքեր

Շնորհակալութեամբ ստացանք հանրածանօթ մտաւորական, Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի անդամ, Ս. Էջմիածնի Գէորգեան ձեմարանի նախկին դասախօս եւ հեղինակ Դոկտ. Յովհաննէս Ահմարանեանի «Հայը եւ Հայաստանը Աստուածաշունչին Մէջ» աշխատասիրութիւնը: 182 էջերէ բաղկացած հատորի յառաջաբանը գրած է Վեր. Սերոբ Մկրտիչեան: Բացառիկ բովանդակութեամբ սոյն գիրքը կը կարդացուի մեծ հետաքրքրութեամբ:



Logo for SYRIAN ARMENIAN RELIEF FUND with text: Զօրացիկ օժանդակներ Փրկենք www.syrianarmenianreliefund.org

Պտոյտ մը Դեպի Մակարավանքի Ծովեզերք

Տղա՛ք եւ Դուք Աղջիկներ

Տղա՛ք եւ դուք աղջիկներ, որ հիմա կ'ապրիք քովէ քով
 Չընայելով իրարու եւ քաշուելով իրարմէ
 Յայուն պզտիկը հին Յայն է միշտ վարքով ու բարքով
 Ո՛վ դուք զոր կեանքը շուտով պիտի բաժնէ ու ցրուէ,
 Ձեզ կ'արտօնենմ, նայեցէ՛ք, նայեցէ՛ք լաւ իրարու,
 Մեծ կարօտովը գիւղին, ծառին, դաշտին, բլուրին
 Որոնք տեսան ձեր ծընունդն օր մը եւ տեղ մը հեռու

Եւ որ ծածուկ, ձեր մէջէն, հիմա մեղմիւ մերթ կ'անցնին ...
 Նայեցէք, լա՛ւ նայեցէք եւ իրարու վրայ զըտէք
 Տղա՛ք եւ դուք աղջիկներ, ինչ որ տըլաւ կեանքը ձեզ
 Եւ խըլեց բախտը ձեզնէ – ձեր ընտանիքն ամբողջ հէք,
 Ձեր հայրն ու մայրն ու եղբայրն ու ձեր քոյրիկը նոյնպէս,
 Եւ երդուրնցէք, դուք տղաք եւ աղջիկներ դուք Յայու,
 Ըլլալ յաւետ, կեանքին մէջ, բախտին դէմ բախտ իրարու:

ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ


Ընթերցող, լիշո՞ւմ ես իմ մի քանի պատումները Մակարավանքի մասին, այժմ փլատակ Մակարավանք, որի վերջին իմ պատումում ասել էի, որ վերջ չկայ նրա անցեալի աստղագարդ կեանքի ու մօտիկ անցեալին նրա մարման հեւքի մասին պատմելու: Այն ոգեղէն յուշ է դարձել մարած տաճարի տղոց ու աղջիկների սրտերում: Մակարավանք, Մելգոնեան կրթական Հաստատութեան աշակերտների ուրախութիւնն էր այնտեղ անցըրած ամառային արձակուրդները: Ամառային տաղտկալի տապից հեռու, մայրի ծառերի հովանու տակ գիրք ընթերցել, ուսուցիչների ուսումնական յանձնարարութիւնները կատարել, արեւը գրկած պտոյտներ, լեռնազանցութիւններ բնութեան գրկում: Վերջապէս, աղջկանց հետ աւելի մօտիկ լինելու առիթ, մասնաւորապէս այն աղջկայ հետ, որի սիրոյ լոյսն էր պատարագում իր հոգում: Պատանու ըղձանքի հրճուանք էր այն, իր երեւակայութեան շանթերի լոյսը պատուում նրա սիրտը, այնտեղ լցնում իր պատանեկան անմեղ սիրոյ խոյանքի կրակ, որը կենդանական աշխարհի գահին բազմած մարդ արարածի մեծագոյն պարգեւն է: «Հայր Մեր», «Հայր Արա աստուած» ձեր տիեզերական գործութեամբ Մակարավանքին նորոգ կեանքի շունչի հոնդին պարգեւեցէք, նորէն ծիծաղ լինէր այնտեղ, պատանիների քրքրել լինէր այնտեղ: Ծատ տարիներ են անցել այս գիրքը գրելուց առաջ, նախորդ հարիւրամեակի քառասունական տարիներին Մակարավանքի ծովեզերք պտոյտ գնացող քառասունհինգ թուակամի տասներեք շրջանաւարտներից Պօրոս Լագիսեանն էր Արշալոյս Խանձեանն են արեւագալի մթնշաղի լոյսով ցօղում իրենց դէմքերը, լիշում նրանց, այս գրի լոյսը ծիծաղող խուկիկ ամպիկ լինէր նրանց շիրմներին:

Ուրախ էր Մակարավանքի առաւօտը, աղմկում էին նրա բակում լարուած վրաններում հանգստացող տղաքը, վարդապետների սենեակներում հանգստացող աղջիկները: Հսկիչ Տոբթօր Մելքոն Քրիշտեանի թելադրանքով տղաք պատրաստում էին օրուայ պտոյտի, թեթեւ հագուստ հագնում, փոխնորդ հագուստները դարձում իրենց համարակալուած փոքրիկ տոպրակներում: Այդ օրը Միջերկրական ծովի Մակարավանքի ծովեզերք պտոյտի պիտի գնային, պիտի լողանային «Հայկական Մոսկովա»-ի տաքուկ ջրերում, որտեղի պիտի նաւահանգստում Մեծն Տիգրանի վարդան ծովակալի նա-

ւատորմիդի մարտական նաւերն էին հանգրուանել, այնտեղից եզրկատու արշաւելու:

Մակարավանքի առաւօտ, հսկիչ՝ Տոբթօր Մելքոն Քրիշտեանի հետ մանչերն ու աղջիկները շարքերով վանքի բակի մատուռ գալիս: Նրա խորանի երկու կողմերին կանգնած աշակերտներից՝ երեք տասնամեակ առաջ Մուսա Լերան բարձունքներում դուշմանի դէմ յաղթական մարտերից հայրենի գիւղեր վերադարձածների որդիներ էին: Թող ինձ ներուշի, որ այդ աշակերտների անունները թուարկեմ, որ այն պատմութիւն լինի, հիմա նրանցից միայն ես եմ արեւագալին երեսս ցօղում նրա լոյսով: Այսպէս, Զէյթունիա աւան՝ Զաւէն Կէօքճեան, Վարդգէս Եղուպեան (Լերան կուռի հերոսներից Եսայի Եղուպեանի տղան), Վազրթ գիւղից՝ Պօրոս Մատուռեան, Սարգիս Փենչեանն էր հաստատութեան 1934 թուականի առաջին շրջանաւարտներից Թովմաս Գարթուռեան, Եղունջուղ գիւղից՝ Պօրոս Լագիսեան (Մուսա Լերան գիւղերի բժիշկ, Լեզնոնական կապուրալ Տոբթօր Արմենակի տղան), Մարտիրոս Գուշագճեան, Հաճի Հայապալի գիւղից՝ Կարապետ Մարտիրեան, Կարապետ Վարդապետեան, Պետրոս Բլբուլեան, Պիթիաս գիւղից՝ Պարգեւ Ֆիլեան, Մարի Գասապեան, Մովսէս Երզնէթեան: Այդ աշակերտներից դուշմանի դէմ կռիւ մղած՝ Մատուռի, Ծապինգարահիսարի, Վանի, Վասպուրական Ծատախի, Զէյթունի, Ուրֆայի, Այնթապի, Հաճնի, Մարաշի, Չորք Մարգարանի շառաւիղներ, դուշմանին խաղի բերած ողջերի շառաւիղներն էին: Երգում էին հազար եօթ հարիւր տարիներ իրենց նոր հաւատքի խորհրդանիշ դարձած՝ «Հայր Մեր»-ը, իրենց «Հայրը» մահուան ճանբաներին ոչ մի պատառ հաց տուեց նրանց, ոչ էլ «Փրկեալ ի չարէ»: Ինչ, «Հայր Մէր» երգում էին, իրենց «Հայր»-ը Արա աստուծոյ արեւի լոյսի թեւերին բազմած գնար նրա հրագունդից պատաններ պոկէր, աշխարհի մեծերի հոգիներում մարած լոյսը վառէր:

«Առաւօտ Լուսոյ» Տոբթօր Մելքոն Քրիշտեանի ղեկավարութեամբ իրենց Արեւագալն էին ողջոյնում, հազար-հազար տարիներ արեգակը, նրա լոյսի պաշտամունքը ողջ մնաց Արմին-հայերի հոգիներում, ոչ ոք կարողացաւ այն մարել, իրենց «Հայու» աստուածն էր այն վառել իր որդի Հայկ Նահապետի սրտում: Վանքի տղաքն աղջիկներ «Արեւագալ»-ին նուիրում «Առաւօտ Լուսոյ» շարականն էին երգում, նրա լոյսն էին վարում վանքի խորանի սկիհներ-



րում: Վանքի մանչեր, սիրուն, աղուորիկ աղջնակներ, որոնցից շատեր այն մութ ու անաւոր օրերի գոհերի շառաւիղներ էին, որոնց արի ծնողներից անօրէն թշնամու դէմ գէնք էին ճօճել, կուռում զարկել նրան, քչել ուազմի դաշտից: Այդ աղջիկները հարա պիտի լինէին, տղաները փեսայ պիտի լինէին, արարչական իրենց ցեղին պարգեւէին գերդաստանների նահատակութեան յուշը, նրանց անուններով կոչէին իրենց ծնած մանչերին ու դուստրերին, որ նրանց լոյսը վառուէր իրենց նորոգ պատած տներում: Արեւագալ, աւելի քան հարիւր յիսուն մանչեր ու աղջիկներ երգում էին «Առաւօտ Լուսոյ» արեւին ու լոյսին նուրբուած երգը, որը ամէն առաւօտ իրենց ուսման տաճարի հանդիսարանում երգում էին լոյսի փառաբանումը, «Լոյս», իրենց ցեղի մարդիկ նորէն գիտութեան ու արուեստների լոյսի ջահեր վառել աշխարհում: Հայ արի մարդ, առա այն, դու էլ երգիր ամէն առաւօտ.

Առաւօտ լոյսի
 Արդար արեգակ,
 Ինձ վրայ լոյս ծագեցրու:
 Բխումն հօրից,
 Բխիր հոգուց մէջ,
 Խօսք քեզ հաճելի:

Վանքի ձորն էր արեւագալի հնչիւնները կրկնում, այն արեւի լոյսի թեւերին բազմած գնում Հռոմկլայ վանքի հողին հանգչած Ներսես Ծնորհալիի շիրմաքարը շոյում, Ներսէս իմաստուն ու խոհուն վարդապետ, «Արեւագալին» նուիրել չորս շարական երգեր, այլ բազում շարականներ:

Ամառային արձակուրդի հսկիչը տղաներին ու աղջիկներին կարգադրում վանքի ներքեւի դրան առաջ շարքի կանգնել: Վանքի աղբիւրի կողքի արահետով, տղաներ ու աղջիկներ առանձին խմբերով քայլում դէպի Մակարավանքի ծովեզերք: Հաստատութեան տնտեսական բաժնի պատասխանու փ-

լիպտեան, էշուն բարձած ուտելիքով, հետեւում նրանց: Քիչ անց տղաների ու աղջիկների խմբերից առաւել համարձակներ մօտենում իրար, ամօթից շիկնած հայեացքներով, թէ սիրոյ կրակով լեցուն աչքերով շանթում իրար ... Խօսել ... պապանձում ... ուզում ասել այն ինչ իրենց դողացող սրտերն էին յուշում ... «սիրում եմ քեզ»: Քայլում էին: Հասել էին բլրակի տակի նեղ լիկ արահետի շրջադարձին, ժամանակին գնդակ էր որոտացել այնտեղ, բլրակի թփուտի տակից վանքի պահպանութեան հսկիչ՝ Զէյթունցի Ակուն Աղայի աւագ որդի Գէորգ Գիւզելեանը, հօրը Մօսին հրացանով, զարկել էր արահետով անցնող էշուն նստած շրջանի յոյն կալուածատէր Հաճի թումային: Գնդակը անցել էր նրա մարմնով, մխրճուել էշու քամակին, երկուսն էր գետին էին տապալուել... դեպքի պատահարին եկածներ նրանց մահն էին ազդարարել: Գէորգ վանք էր շտապել: Տեղում ժամանած ոստիկաններ, որպէս կասկածեալ ձերբակալել Գէորգին էին: Երջանի Յոյներ, նրա հարստահարումից ազատուելու համար Գէորգին դրդել էին սպաննել թումային, ի՞նչ պայմանով ... վանքում տեղեակ էին: Դատավարութիւն էր եղել, երեւի տեղի շահագէտ մարդկանց միջամտութեամբ ազատ էր արձակուել:

Քայլում էին, երգում, մենք գում էին առաւել գեղեցիկ ձայն ունեցող աղջիկներ, մի քանի քանամեակներ անց էլ դեռ հոգիս ծիծաղում է, շատ յաճախ կիսաբաց աչքերս սեւեռում եմ այն օրեր, լոյսի բոցերի մէջ բռնկած վանք, լոյսի մէջ բռնկած Մելգոնեան տաճար, լոյսի մէջ բռնկած ուսումնառութեան եօթ տարիներ ... լոյսի մէջ բռնկած աղջիկներ, լոյսի մէջ բռնկած «սէր»: Այդ աղուոր աղջնակներից մէկը հարա եղաւ Հայկա-

Ահա Թե՛ Քեզի Ինչ Կը Սորվեցնէ Ծիշո՛ Տղամարդը

ԺՖնական է, երբ դուն անոր կ'ըսես, որ ինչու տխուր ես: Բնական է, երբ քու տղամարդուդ կ'ըսես, որ ի գուր էր անոր երէկուական ջղաջնութեան պատճառը, եւ բնական է երբեմն չհամաձայնիլ անոր հետ: Ասիկա այն դէպքն է, որ ան ձեզմէ ոչ մէկ տեղ կը փախչի: Ասիկա այն մարդն է, որ կը յարմարի քու իւրաքանչիւր վատ սովորութեանդ, եւ որմէ՛ դուն պարզապէս ազատիլ չես կրնար, ան է որ քեզի կ'ըսէ, որ դուն ամենահասարակ կիներն ես, որուն ան երբեք տեսած է առանց դիմադրարման եւ սանտրուածքի: Այն մարդն է, որ կը հպարտանայ, որ այդքան հզօր կ'ընջ կողքին է, այլ չի վախնար անկէ:

Ան քեզի կը սորվեցնէ, որ դուն քեզի պաշտպանելը բացարձակապէս ճիշդ վարքագիծ է:

Ան չի նուաստացնէր քեզ, չի ստիպէր դուն քեզի անարժէք ու անպիտան մէկը զգալ:

Ան կը խթանէ քեզի արտայայտելու սեփական կարծիքդ, քանի որ կը հաւատայ, որ յարաբերութիւններու մէջ շփուած շատ կարեւոր է:

Ան ցուցադրաբար չի հեռանար կամ իրեն կրաւորական-յարձակողական չի պահեր, քանի որ դուն, ենթադրեմք, որեւէ հարցով ցաւցուցած ես զինք, պարզապէս որպէսզի դուն յետոյ մեղքի զգացում ունենաս: Ոչ մէկ վատ բան կայ սեփական զգացմունքներու մասին խօսելուն մէջ:

Եթէ տղամարդը կը վախնայ քու գորակոր ըլլալուդ համար, ուրեմն, ցաւօք, ան քեզի համար չէ: Ճիշդ տղամարդը քեզի ցոյց պիտի տայ բոլոր այն պատճառները, որոնց համար դուն պէտք է սիրես բոլոր այն կողմերդ, որոնք տանիլ չես կրնար, քանի որ կը կարծես՝ անոնք լաւագոյն որակները չեն: Այդ տղամարդը հոգեպէս, ֆիզիքապէս եւ զգացական մակարդակով կ'աջակցի քեզի ու կ'ըսէ, որ ամէն ինչ կը սիրէ մէջդ:

Սկիզբը դուն անոր չես հաւատար, որովհետեւ քեզի ոեւէ մէկը

բնաւ չէ ըսած, որ իրեն, ենթադրեմք, հաճելի են ազդրերդ, այն պարագային, երբ դուն, ըսենք, երկու տարի է չես կրնար նիհարնալ:

Եւ յետոյ ան երբեմն աչք կը փակէ կանացի խորամանկութիւններուդ վրայ, եւ եթէ անգամ ան ուզէ կրակի վրայ իւր լեցնել, ան նախ կը փնտռէ այն պատճառները, որոնք քեզի դրդած են այդ վարքագիծը դրսեւորելու: Ան կը հասկնայ, որ դեռ չեն սպիացած նախորդ յարաբերութիւններուն հասցուցած վէրքերը, եւ դուն դեռ չես կրնար մոռնալ զանոնք:

Ան քեզի կը սորվեցնէ, որ վէճեր կրնան ըլլալ նաեւ առանց բղաւոցներու, կոպտութեան ու վիրաւորանքի: Այդ վէճերը կրնան ընթանալ միմեանց նկատմամբ ազնիւ, յարգալից ու համբերատար ըլլալով:

Ան քեզի կը սորվեցնէ, որ բնական է տղամարդը սիրել այնքան ուժգին, որքան որ հնարաւոր է, քանի որ սկիզբը դուն քեզի կը զսպես՝ քու նախորդ յարաբերութիւններուդ տխուր փորձէն մեկնելով:

Բայց թոյլ մի տար, որ սխալ մարդիկ կուլ տան քեզ: Անոնք այլեւս քու կեանքիդ մէջ չկան, եւ ատիկա իր պատճառը ունի:

Եւ վերջապէս, ան քեզի կը սորվեցնէ ինչպէս խսկապէս ըլլալ այնպիսին, ինչպիսին կ'աս:

Ան քեզ կը սիրէ ոտքէն գլուխ: Դուն դեռ չես հաւատար անոր, բայց ատիկա այդպէս է:

Շնորհակալ եղի՛ր, երբ այդ տղամարդը յայտնուի կեանքիդ մէջ: Ան այնպիսին չէ, ինչպէս միւսները, որոնք կը բաւարարուին յարաբերութիւններու պատահով, որոնք դեռ կը սորվին պարտաւորութիւններ ունենալ: Այդ տղամարդը գիտէ, թէ ինչ կ'ուզէ ինքը, ան շատ բանի մէջէն անցած է ու քաղած է կեանքի տուած բոլոր դասերը: Եւ ան կը փնտռէ մէկը, որ կրնայ համա պատասխանել իր կենսափորձին եւ կրկին սիրելու պատրաստ ըլլալուն:

Յանկութիւնները Նիւթականացնելու Երեք Միջոց

1) Յանկացէք զգուշութեամբ-Քանի որ ձգողականութեան օրէնքի առաջին կանոնը այն է, որ ճիշդ ձեւակերպուած ցանկութիւնները անպայման կ'իրականանան: Ճիշդ է՝ ոչ մէկ անգամէն: Հաւանաբար, շատ աղջիկներ նկատած են հետեւեալ օրինաչափութիւնը. կ'երազես տուեալ երիտասարդի մասին, անարդիւնք կը փորձես անոր ուշադրութիւնը գրաւել, կը տառապիս: Ժամանակ կ'անցնի, աղջիկը կը մոռնայ իր տարուածութեան մասին, եւ յանկարծ ան կը յայտնուի տեսադաշտի վրայ: Եւ ամէն ինչ այն պատճառով, որ ձգողականութեան օրէնքով մենք կը քաշենք ամէն ինչ, որ իրականութեան մէջ ունինք: Այսինքն՝ այն, ինչ ցանկացած ենք ենթադրուածքով, վաղ թէ ուշ իրականութիւն կը դառնայ: Ասիկա կը վերաբերի կեանքի բոլոր ոլորտներուն՝ առողջութիւն, ասպարեզ, բարեկեցութիւն, հակառակ սեռի հետ յարաբերութիւններ:

2) Յիշեցէ՛ք, որ մեր մտքերը մեր ցանկութիւններն են՝ Մեր են-

թագիտակցութիւնը կապուած է Տիւեզերքի հետ, որ կ'արձանագրէ մեր մտքերը, զանոնք ընկալելով իբրեւ մեր ցանկութիւն: Այստեղ ալ, սակայն, թաքնուած է փոքրիկ վտանգ մը: Մինչ կ'ընդ կը տառապի, որ միւսն է, Տիւեզերքը բողբոջ կ'ընկալէ իբրեւ ցանկութիւն եւ կը նիւթականացնէ զայն:

Իբրեւ արդիւնք՝ կ'անցնին տարիներ, բայց կ'ընդ նախկինի պէս միայնակ է, քանի որ ձգողականութեան ուժին շնորհիւ ինք անձամբ իր կեանք բերած է միայնութիւնը, իսկ այլ կերպով մտածել կ'ամ չի կրնար կ'ամ՝ չ'ուզեր: Այնքան ալ դիւրին չէ հրաժարիլ վատի մասին մտածելու սովորութենէն: Մեզմէ շատերը կը սիրեն բողբոջել ձակատագրէն ու ըսել, որ կեանքը լաւ չէ:

3) Մէջը կու գայ հինգ համարձակ քայլէ ետք՝ Եւ կը պատահի փակ շրջան: Մենք կը բողբոջենք. տիեզերքը բողբոջ կ'ընկալէ իբրեւ «ցանկութիւն», «ցանկութիւններ» կը կատարուին, եւ մենք աւելի շատ կը

Ամբողջական Մարդու Բնաւորութեան 13 Գիծ

Ժամանակակից հասկացողութեամբ ամբողջականութիւնը անբեկանելի ազնուութեան եւ խիստ բարոյական սկզբունքներու համադրութիւնն է: Այս որակը յատկապէս կարեւոր է օտար մարդոց հետ յարաբերելու ժամանակ, քանի որ մենք հակուած չենք անծանօթներու հետ բաց եւ արդարամիտ ըլլալու: Յաւօք, իրականութեան մէջ, ամբողջական անձնաւորութիւններ շատ հազուադէպ կը պատահին, սակայն անոնց կը միաւորեն բնաւորութեան հետեւեալ 13 գիծերը:

1) Անոնք կը գնահատեն ուրիշներուն ժամանակը: Իսկապէս ամբողջական մարդիկ գիտեն ե՛ւ իրենց, ե՛ւ ուրիշներու ժամանակին գինը եւ երբեք զայն չեն անտեսեր: Անոնք շնորհակալ կ'ըլլան համատեղ իրականացած վայրկեաններու եւ ժամերու համար, սակայն չեն պահանջեր անսահման ուշադրութիւն, քանի որ կը հասկնան, որ իրաւունք չունին չարաշահելու ոեւէ մէկուն ժամանակը:

2) Անոնք կը գնահատեն ուրիշներուն վաստակը: Այդպիսի մարդիկ երբեք ուրիշներուն ըրածը իրենց չեն վերագրեր: Եթէ դուք իրեն որեւէ բանով օգտակար ըլլաք, օրինակ, որեւէ նախագիծ իրականացնելու, ղեկավարութեան հետ հանդիպելու, ան չի մոռնար յիշատակելու նաեւ ձեր անունը, ատով իսկ մեծցնելով ձեր անձին նշանակութիւնը դեկավարութեան աչքերուն:

3) Անոնք չեն փոխուիր: Աշխարհի նկատմամբ ազնիւ մարդիկ միշտ կը մնան այնպէս, ինչպէս՝ կան: Անոնք չեն ձեւացներ, չեն խաբեր, չեն բամբասեր եւ դաւեր նիւթելով չեն զբաղիր:

4) Անոնք միշտ ազնիւ են: Այդպիսի մարդոց համար արդարութիւնը աւելի մեծ նշանակութիւն ունի, քան սեփական յարմարաւէտութիւնն ու բարեկեցութիւնը:

5) Անոնք երբեք ուրիշները չեն օգտագործեր: Այս կեանքին մէջ անոնց կոչումը ուրիշին օգնելը, այլ ոչ երբեք՝ օգտագործելն է: Ամբողջական, ինքնաբաւ մարդիկ առանց զղջալու իրենց ժամանակը կը վատնեն այն բանի վրայ, որ իրենց համար կարեւոր մարդու նպատակը մէկ քայլով եւս մօտեցնեն իրականացման:

6) Անոնք չեն վիճիր: Այդպիսի մարդիկ հակուած չեն ամբոխավարութեան: Անոնք կ'ամ կը խօսին ըստ էութեան եւ կառուցողական դաշտի մէջ, կ'ամ կը մնան իրենց կարծիքին: Ասիկա յատկապէս կը վերաբերի մտացածին խնդիրներուն կամ իրավիճակներուն, որոնք ընդհանրապէս արժանի չեն քննարկուելու:

7) Անոնք կասկածի տեղ չեն տար: Այդպիսի մարդոց վրայ միշտ կարելի է յոյս դնել, քանի որ անոնք կը տեսնեն միայն իրավիճակին լաւ կողմերը: Այնուամենայնիւ, երբ

յարաբերութիւնները կը սկսին կրել սպառողական բնոյթ, անոնք առանց ափսոսալու վերջ կու տան անոնց:

8) Անոնք գիտեն ինչպէս հանգստացնել զրուցակիցը: Հրա - շալի կերպով զարգացած մտածեսութիւնը ամբողջական մարդոց հնարաւորութիւն կու տայ նրբօրէն եւ ժամանակին կանխագալու զրուցակիցին անհանգստութիւնն ու տագնապները:

Եւ անոնք ամէն ինչ կ'ընեն, որպէսզի իրենց զրուցակիցին օգնեն գոնէ բարի խօսքով եւ հաւատքով, որ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ:

9) Անոնք կը վստահին ուրիշներուն: Այդպիսի մարդիկ մինչեւ վերջ, անվերապահօրէն կրնան հաւատալ բոլոր անոնց, որոնք իրենց համար արժէքաւոր են: Բայց հագիւ խաբէութիւնը բացառապէս ու մերկանայ, ստախօսները կ'անհետանան անոնց կեանքէն:

10) Անոնք առաջինն են, որ ներողութիւն կը խնդրեն: Եթէ ինքնաբաւ մարդը զգայ, որ մեղաւոր է, ան անպայման կ'ընդունի իր սխալները, անոնց համար ներողութիւն կը խնդրէ եւ կը գտնէ ամէն ինչ ուղղելու լաւագոյն տարբերակը:

11) Անոնք համեստ են: Այնպէս եղած է, որ այդ բացառիկ մարդիկ բացարձակապէս իրենց չեն գնահատեր: Անոնք կ'ապրին իրենց սեփական կանոններով եւ ատիկա կը համարեն բնական, հակառակ այն բանին, թէ որքան օգուտ կը բերեն իրականութեան մէջ:

12) Անոնք առիթը չեն փախցներ բարի գործ ընելու: Իբրեւ կանոն՝ անոնցմէ պէտք չէ օգնութիւն խնդրել: Ամբողջական մարդիկ իրենք կը զգան օգտակար ըլլալու կարիք եւ փոխարէնը չեն սպասեր անգամ հասարակ շնորհակալութիւն: Անոնց համար կարեւոր է ուրիշներուն կեանքը աւելի լաւ դարձնելը:

Ատոր մէջ անոնք կը տեսնեն իրենց սեփական կեանքին իմաստը:

13) Անոնք բարի են բոլորին նկատմամբ: Որոշ մարդոց անհրաժեշտ է մեծ ջանքեր գործադրել ուրիշներուն հանդէպ բարի ըլլալու համար: Ամբողջական մարդոց համար ատիկա ինքնըստինքեան ենթադրուող փաստ է, անոնք պարզապէս այլ կերպ չեն կրնար:

Յաւօք, օրէ օր այդպիսի մարդոց թիւը կը նուազի: Մարդոցմշակող մեծամասնութիւնը կը ձգտի ապրիլ իր առաւելագոյն շահը գերադասելու սկզբունքով՝ մոռնալով իր շրջապատի եւ ամենապարզ բարոյական ու հասարակական չափանիշերու մասին:

Եթէ ձեր բախտը բերած է եւ դուք հանդիպած էք իսկապէս ազնիւ եւ անշահախնդիր մարդու, անպայման շնորհակալութիւն յայտնեցէ՛ք անոր՝ ատոր համար: Անոնք, առանց չափազանց ցուծեան, անգին են, եւ իրենց վրայ է, որ կը հենուի ժամանակակից հասարակութիւնը:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

սկսինք բողբոջել: Նոյնը կարելի է ըսել վախերու մասին: Ուղղակի չեն ըսեր, որ կը կատարուի այն, ինչն են մենք ամենաշատը կը վախնանք:

Ճիշդ մտածեցէ՛ք: Վերոնշեալը հարց կ'առաջացնէ՝ իսկ ի՞նչպէս սորվիլ ճիշդ մտածել, ձակատագիրը փոխել ճիշդ ուղղութեամբ եւ միայն դրական բաներ մտածել: Պատասխանը պարզ է. պէտք է ցանկութիւնները ճիշդ ձեւակերպել:

Իսկ մինչ այդ, աւելի լաւ է

հրաժարիլ հին ու բացասական միտքերէն, որոնց հետ մենք սորված ենք ապրիլ: Անոնք պէտք է մէկ կողմ նետել, վերանայիլ անցեալը, որոշել երջանիկ ապագան եւ անկէ ետք անոր մասին միայն դրական մտածել: Մեր սեփական համոզումները, որոնք սեւ գոյներով ներկուած են, նոյնպիսի սեւ կեանքի երաշխիքն են:

Այնպէս որ, փոխուելու ժամանակն է:

Ինքնուրոյն Մտաւորական Սահակ Թութեան

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Աշխարհիկ մեր այս կեանքին հրաժեշտ տուաւ ինքնուրոյն մտաւորական մը եւս՝ Մահակ Թութեան, հեղինակը հատորի մը եւ բազմաթիւ յօդուածներու: Ինքնուրոյն՝ որովհետեւ բազմապիսի էին իր հետաքրքրութիւնները եւ անոնց շարքին գրականութիւնը առաջնահերթութիւնը կը գիջէր բնական գիտութեանց, յատկապէս բնագիտութեան եւ աստղագիտութեան: Մասնագիտութեամբ շինարար ճարտարագէտ մըն էր: Ասպարէզ մը, որ բազմազբաղ կը պահէր զինք: Սակայն եւ այնպէս պատանեկութեան տարիներէն իր մէջ արթնցած ընթերցանութեան սէրը, հետաքրքրութեանց լայն դաշտ մը բացած էր իր առջեւ: Բնագիտութիւնէ եւ աստղագիտութիւնէ ետք, այդ դաշտը կ'ընդգրկէր մարդկային-ընկերային գիտութիւնները, սոցալոգիա-քաղաքական տեսութիւնները, գեղագիտական հայեացքները, հայկական ճարտարապետութիւնը, միջազգային եւ հայ գրականութիւնը եւ այլ ոլորտներ:

Մենք բախտաւորութիւնը ունեցած էինք ծանօթանալու իրեն եւ իր տիկնոջ՝ Լիւսիին 1980-ական թուականներուն, երբ կը գտնուէինք Սէնտաւական Արաբիոյ մէջ: Մեր առաջին քանի մը հանդիպումներէն արդէն իսկ մեր վրայ թողած էր հայրենասէր մարդու, ինչպէս նաեւ քննական միտք ունեցող գործնական մարդու տպաւորութիւնը: Իրենց տան մէջ, Տիկին Լիւսիի առաջնորդութեամբ, երեխաներու յատուկ Ուրբաթօրեայ հայկական դասաւանդութիւնները լաւագոյն օրինակն էին մեր կրած տպաւորութեան ճշգրտութեան: Ծակատագրի բերումով, մօտ քսանամեակ մը ետք, մեր սերտակցութիւնը աճեցաւ Լոս Անճելոսի մէջ, մասնաւոր երբ երկուքս ալ մաս կազմեցինք «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական կազմին: Եթէ փորձենք մէկ բառով նկարագրել Մահակ Թութեանը, այդ պիտի ըլլայ «հարազատութիւն» բառը: Ան հարազատօրէն կ'արտայայտէր իր զգացումները, մտքերը, մտահոգութիւնները, ուրախութիւնները, յուսախաբութիւններն ու ակնկալութիւնները: Յատկանիշ մը՝ որ երբեմն դուռ կը բանար անյարմար կացութեանց:



Բաց Մահակ Թութեանը այդպիսի կացութիւններէ խուսափող չէր: Հարազատութեան կողքին, համարձակ ալ էր եւ երբէք չէր վարանէր հրապարակաւ արտայայտելու իր մտքերը: Տանք օրինակ մը: Եղեռնի նուիրուած Ապրիլեան երեկոյի մը յայտագրի ընթացքին, արուեստագէտ մը սկսաւ ուրախ տրամադրութեան երգ մը ներկայացնել: Ներկայ հանդիսականներէն մին բարձրաձայն բողոքել սկսաւ: Թութեանն ոտքի կանգնելով սաստեց այդ հանդիսականը՝ «մենք մեռած չենք, մենք կ'ապրինք» խօսքերով, խլելով ծափահարութիւններ:

Մեր այս գրութեան սկիզբին նշեցինք, որ Մահակ Թութեան ինքնուրոյն մտաւորական մըն էր: Իր գրութեանց մէջ մենք կը տեսնէինք գեղեցիկ միաձուլում մը մաքուր, մտերիմ ու հարազատ հայրենասիրութեան եւ բնական գիտութեանց ու ճարտարագիտական ասպարէզի պարտադրող ստոյգ, անխարդախ, առարկայական ու շեշտակի մօտեցումներու: Այս մէկը յատկօրէն կ'արտացոլար իր կատարած արդար ու շինիչ բնութագրութեանց, թելադրութեանց թէ առաջարկութեանց ընդմէջէն: Կը բաւէ կարդալ իր «Արեւը Լեռան Ետին» գիրքը, համոզուելու համար թէ որքան իրաւացի են մեր տպաւորութիւնները իր մասին:

Մահակ Թութեան Պէյրութի հիւղաւաններէն մէկուն մէջ կեանք առաւ: Շրջագայեցաւ աշխարհով մէկ ու մեկնեցաւ այս աշխարհէն: Բաց անոր վրայ գտնուած միջոցին, արժեւորեց իր կեանքը, ինչպէս նաեւ հարստացուց շատ մը կեանքեր:

Անցումային Արդարադատութեանը Ընդդիմացողներ

Շարունակուած էջ 2-էն

րում ունեցող շրջանակների, այդ թվում՝ ե՛ւ ՀՅԴ-ի, ե՛ւ ՀՀԿ-ի համար անցումային արդարադատութիւնը, ինչպէս ցանկացած այլ նախաձեռնութիւն, պարզապէս առիթ է հակաքարոզութեան համար: Հենց այստեղ է, որ ակնյայտ է դառնում այսօրինակ շրջանակների մտահոգութիւնների կեղծութիւնը: Ի վերջոյ, եթէ որեւէ մէկը Հայաստանում իսկապէս ցանկանում է ունենալ առողջ, անկախ եւ վստահելի դատական իշխանութիւն, ապա պարզապէս չի կարող չնկատել վերջինիս արատաւորութեան ամբողջ ծաւալը: Այստեղ է, որ ինչքան էլ սույն օղակները ատամները սեղմած ողջունում են անցած տարուայ Ապրիլ-Մայիս ամիսների ժողովրդական շարժումն ու յեղափոխութիւնը, սակայն չեն

կարողանում թաքցնել իրենց կարօտախտը առ իշխանական ու կողմնակից անցեալը եւ իրենց ատելութիւնը ամենայն նորի հանդէպ: Եթէ իսկապէս էլ քաղաքական ուժը, գործիչը, ընդունում է յեղափոխութիւնը, ողջունում է այն, պարզապէս չի կարող պահանջել, որպէսզի ամէն ինչ մնայ նոյնը: Սա ինքնին հակատրամաբանական է, քանի որ յեղափոխութիւնը հենց արմատական փոփոխութեան մեկնարկ է, ոչ թէ կոնսերուացիայի գործընթաց: Այլ կերպ ասած, հայաստանեան քաղաքական դաշտի մի շարք շրջանակներ՝ անգամ յեղափոխութիւնը ողջունող, դեռեւս չեն հասկացել, թէ իրականում ինչու եւ ինչ է կատարուել Հայաստանում մեկ տարի առաջ: «ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Արշո Թիւթիւնճեան

ՈՌՍԷՆ ԿՈԶՄՈՅԵԱՆ

Հեռախօսազանգը գուժեց. Արշո Թիւթիւնճեանը ոչ եւս է: Այս անունը՝ Արշօ. խորհրդանիշ էր, ինչպէս Լիբանան-Հայաստան կապի, այնպէս էլ Միջին Արեւելքի երկրների եւ ողջ Սփիւռքի: Քիչ են այն մարդիկ, ովքեր կարողանում են ողջ կեանքում, պահել այնպիսի հաւասարակշռութիւն, որը գործում է ոչ միայն անձնական շարաքերութիւններում, այլեւ դուրս է գալիս անձնականից ու դառնում Արշօ Թիւթիւնճեան:

Ով ճանաչում է Արշօյին, բացատրութեան կարիք չունի, իսկ ով չի ճանաչում, թող իմանայ, որ թէ՛ Սփիւռքը, թէ՛ Հայրենիքը կորցրեց մի մեծ արուեստագէտ հայուհու, որն ընդունելի էր Լիբանանի նման բարդ ու հատուածական կեանքում, ուր գործում էին ու են աւանդական կուսակցութիւնները, ազգային ու կրօնական այլ օղակներ, երկատուած եկեղեցի, յետոյ պատերազմական վիճակ ու այդ թնճուկ շարաքերութիւններում, անխտիր բոլոր շրջանակների կողմից ըն-

դունուած ու սիրուած Արշօ...

Լինելով ողջամիտ, կողմնորոշում ունեցող մտաւորական Արշօն առանց երեսպաշտութեան դրական դեր ունէր նոյնիսկ հակոտնեացու ժողովի շրջանակներում:

Չեմ կարող չչիշել մի բախտորոշ պահ, երբ շտապ Պէյրութ էր ժամանելու Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի նախագահ՝ Վարդգէս Համազասպեանը եւ հանդիպում էր ունենալու երեք կուսակցապետերի հետ, հանդիպման վայրը ընտրուեց Արշօ Թիւթիւնճեանի բնակարանը, կարծում եմ մեկնաբանելու կարիք չկայ:

Արշօյի հեղինակութիւնը հայ համայնքից դուրս էր նաեւ, այն պատճառով, որ նա ճափոնական Սոգեցու ծաղկաշարդարման վարպետն էր Միջին Արեւելքում, ունէր բազմաթիւ աշակերտներ, դիւանագիտական կորպուսի կանանց շրջանում:

Արշօն՝ Արշօ չէր լինի, եթէ Աստուած նրա կողքին չզնէր գուսպ, հաւասարակշիռ ծանրախոհ ու լայնախոհ վաղամեռիկ ամուսնոյն՝ Շահինի՝ չքնաղ դուստրերի հայրը:

Ներկայացուած ԵՆ Արեւմտահայ Կանանց Մասին Ուսումնասիրութեան Արդիւնքները

Շարունակուած էջ 8-էն

սիրութեան արդիւնքները հասանելի դարձնենք մեր դասագիրքերուն մէջ», - ըսած է Լուսինէ Առաքէլեան: Կողմերը պայմանաւորուած են նեղ մասնագիտական հանդիպումներ կազմակերպել՝ քննարկելու յետագայ համագործակցութեան ուղիները:

Ապրիլ ամսուն Պոսթըն այցի

ընթացքին Աննա Յակոբեան Մասաչուսէթսի արհեստագիտական համալսարան եւ հետազօտական կեդրոնին մէջ հանդիպած էր Լեռնա էքմէքչիօղլուն եւ Աննա Ալեքսանեանին: Վերջիններս վարչապետի տիկնոջ ներկայացուցած էին ուսումնասիրութեան արդիւնքները՝ խնդրելով աջակցութիւն Հայաստանի մէջ այն դասագիրքերուն մէջ ներառելու հարցով:

«Լոյս» TV-ին Թուրքիոյ Առաջին Հայկական Հեռուստաալիքն Է

Շարունակուած էջ 8-էն

կայ, որ թրքերէնով կը սփռուի: Աշխատողները հիմնական հայ են: Ընտրողաբար չէ եղած, ի հարկէ: Եթէր կը հեռարձակուին հայրենիքի մասին պատմող լուրեր, միջազգային օրակարգին մէջ քննարկուող թեմաներ, ներհամայնքային հարցեր:

«Լոյս»-ը, ըստ հիմնադիրներու, այսօր կը կատարէ իր առջեւ դրուած կարեւոր առաքելութիւն՝ համախմբման եւ արեւմտահայերէնի պահպանման, ատիկա կը վկայեն դրական եւ ոգեւորիչ արձագանքները: Լոյսը եթէր կը հեռարձակուի Luys.tv կայքի միջոցով: Յասմիկ Մարտիրոսեան «Ռատիոլուր»

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel :----- Email: -----

Պտոյտ մը Դեպի Մակարավանք

Շարունակուած էջ 16-էն

կան կամաւորական լեզէոնի կապո-
րալ Արմենակ Լազիսեանին, նրա
աւագ որդի Պօղոսի կեանքի ընկեր:
Կատարեցին վանքում արած խոս-
տովանանքը՝ իրենց մանչին դուշ-
մանի դէմ յաղթական կռուից եկած՝
Արմենակ անունով մկրտել: Վատ
բան պատահեց, հասուն տարիքից
մենակ թողեց ինձ...:

Հասել էինք վանքապատկան
տարածքի Ատալեայ աղբիւր, խո-
ղովակից վազում էր բազուկի հաս-
տուլեամբ ջուր: Հսկիչը հանգստի
պահ էր թելադրել: Մանուրակ էր
ջուրը, ծարաւել էինք, կուշտ խմել:
Աղբիւրի առաջ մշակովի հողակ-
տոր էր՝ պարտէզ, պտղատու ծառեր
էին այնտեղ: Ամառ էր, թուզն էր
հասունացել, կանաչ լայն տերեւնե-
րի արանքներից կարմիր շրթունք-
ներով ժպտում էին: Առանց ծառե-
րին բարձրանալու, ցածր ճիւղերից
թուզ էինք քաղում, ափերով տա-
նում նաեւ նրան՝ ով պիտի ժպտար
իրենց, նրանց ժպիտի մէջ սիրոյ
երազ, ժպիտի մէջ սիրոյ կայծեր,
ժպիտի մէջ կեանք:

Տ. Մելքոն Քրիշտեան աշա-
կերաններին պատմել, որ այդ հողա-
մասից այն կողմը մի Հայ ընտա-
նիքին պատկանող ընդարձակ կալ-
ուած կայ: Այն պատկանում էր
Մուսա Լերան Հաճի Հապապլի
գիւղի Պօյեաճեան ընտանիքին: Պօյ-
եաճեան՝ «Հայկական Կամաւորա-
կան Լեզէոն» մարտիկներից էր,
կռուով հասել Սիս, Փրանսական
իշխանութիւնների կողմից այն կազ-
մալուծուելուց յետոյ Կիպրոս կղզի
եկել, տիրել այդ կալուածին: Հաս-
տատուութիւն էր եկել, հանդիպելու
իր լեզէոնական ընկերների մանչե-
րի հետ, նրանց պատմել իրենց
լեզէոնական ծնողների հետ դուշ-
մանի դէմ կռուի, նրանց հետ
միատեղ գինուորական ծառայու-
թեան մասին: Յետոյ պիտի իմա-
նայինք, որ մի գիշեր յարձակուել
էին նրանց կալուածի տան վրայ,
նրա ներսի հետազոտութիւնից պար-
զել էին որ այդ ու կին Պօյեաճեան-
ներ երկար դիմադրել էին, գէնք
պայթեցնել նրանց վրայ, ընկճուել
էին, սպանուել: Հայաստան ներ-

գաղթած նրանց դուստր Վարսենիկ
Պօյեաճեան Հայաստանի գրողների
միութեան անդամ էր, աշխատակ-
ցել «Հայրենիքի Ձայն» լրագրին,
հրատարակել հետաքրքիր պատմ-
ուածքներ ու լրագրական հրապա-
րակումներ: Պօյեաճեանների գեր-
դաստանից բազում անուանի յետ-
նորդներ կան Լուս Անճելոսի տար-
բեր քաղաքներում:

Մօտեցել էինք ծովին, արեւի
կապոյտն էր իջել նրա ջրերում,
անուշ մեղմ կապոյտ: Ճանապարհի
երկու կողմերին ծառաշատ լայն
տարածքներ էին, խոշոր ծառեր,
որոնց ոստերից կախուած էին եր-
կու մատերի չափ լայն, եղջիւրան-
ման սրճագոյն երկար տափակ
պտուղներ, ինչքան լիւրճում եմ «գառ-
նուպ» էին ասում նրան, է՛հ ...
հասունները կտրում էինք, մեղ-
րանման հեղուկ ծորում նրա
խոռոչներից, համով էր:

Կիպրոս կղզի, հիւսիսային այդ
շրջանի տարածքից 8400 արտա-
վար (էջքը) լայնատարած հողա-
տարածքը Մակարավանքի սեփա-
կանութիւնն էր, որի գրաւոր վկա-
յագրի մէկ օրինակը գտնուած է
Կիպրոսի առաջնորդարանի գիւր-
նի պահոցում: Կիպրոս, 1877-1878
թուականների Ռուս-թրքական
պատերազմում թուրքիան պաշտ-
պանելու խոստումով Անգլիային
էին այն գիշել: Գաղութային իշ-
խանութիւնները Մակարավանքի
հողային սեփականութեան տարած-
քի սահմաններն էին ուզեցել ճշտել:
Պատմում էին, որ իբր վանքի մի
վարդապետ, իշխանութիւնների
ներկայացուցիչի հետ, մի ամբողջ
օր ձիավարելով ճշտել էին վանքի
կալուածի հողային սեփականու-
թեան տարածքի սահմանները, այն
հաստատուել էր նշած սեփակա-
նատիրական վկայագրով (Տապու):

Աշակերտներ վազում էի դէպի
ծով, հասել մանրիկ աւազի երեսին
մարող ալեակներին, հսկիչ Մելքոն
Քրիշտեան կանչել էր՝ սպասել:
«Ծով է» ասել էր, «մի քանի մեթր
հեռու խորանում է յատակը, լողա-
նալ չիմացողները կարող էին խեղդ-
ուել»: Ահա մի խիճ եմ նետում,
նրանից այն կողմը լողալ չեմ
թոյլատրում, եկել ենք ծովեզերք

պտոյտի՝ մեր մարմինները նրա
ջրերով ու արեւի ճառագայթների
լոյսի կրակով կոփելու:

Լողափը լայն ծովածոց էր,
նրա մեղմած ալիքները փշրում
էին ափի երկայնքի մանրիկ աւազի
վրայ, տղաները ալիքների անհաս
մասերին նկարում էին տներ, պար-
տէզներ, թաց աւազով բերդեր,
մարդիկ: Տներ, կորսուած տներ,
փլած տներ, Լեհաստանում նկար-
չութեան մի մրցումին մասնակցող
յիսուն հայ տղաներից բոլորը իրենց
պատկերներում տուն էին նկարել,
ծառեր էին նկարել՝ իրենց մեծ
հայրերի պատմած յուշի ոգու
պոռթկումն էր, հայ բանաստեղծն
էլ ծառ էր տնկել որպէս խաչեր իր
նախնիներին: Ես էլ հայրիկիս հետ
Մուսա Լերան մեր պարտէզում ծառ
տնկել, նրանց պտուղը դուշմանն է
ուտում, ե՞րբ են այդ մարդիկ
«դուշման» չեն լինելու ... միայն
այն ատեն, երբ նրանց միտքը
ուրիշից ցաւը կը գգայ, կ'արտասուի
անմեղ մարդ, մանուկ սպանած
լինելու համար, միտքը կը գարթնի
արեւագալի լոյսի պէս մարդ սիրել:
«Մակարավանքի ծովեզերք» էին
ասում այդ տեղանքին, այստեղ էին
պտոյտի գալիս: Տղաները ու աղ-
ջիկները ծովածոցի հակադիր կող-
մերին էին:

Տղաք ժամերով լողանում էին,
ջրում իրար, ջրում ընկողմանում
իրար, լողում մինչեւ հսկիչի սահ-
մանած նշան, լողալ իմացողներ
թաքուն խախտում այն, աւազի
վրայ մարմինները արեւահարում:
Չարմանալի է, բացի մարդ արարա-
ծից բոլոր կենդանիները կարողա-
նում ջրում լողալ, տեսնէիք ձին
ինչպէս սիրուն լողանում է՝ մարդն
էլ իր գաւակին: Տղաք նայում
աղջիկներին, նրանց ջրեր ճողբելը,
նրանց փրփուրներում կարծես փե-
րիներն էին երկնքից իջել, հրաշա-
գեղ փերիներ, եթէ այն չես տեսնում

չի նշանակում այն չկայ, եթէ հին
ու նոր աստուածներին չես տես-
նում, չի նշանակում նրանք չկան»: Աղջիկներ,
արեւի ճառագայթներին
յենած կիսաբաց մարմիններն
էին արեւահարում, տղաք նայում
լոյսի արեւակէզ ճառագայթների
մէջ նրանց ստուերացած մարմին-
ներին, արեւից լուսացած դիցու-
հիներ, ջրերում ելած ջրահարսեր,
բանաստեղծը արտօնել էր նայել,
նայել իրարու, իրենց հայրերի,
մեծ հայրերի, հայրերի «կարօ-
տովը գիւղին, ծառին, դաշտին,
բլուրին, որոնք իրենց հոգիների
լոյսով էին անցնում»: Արեւն էր
իր լոյսի մէջ առել աղջիկներին,
արեւացած աղջիկներ, մարմա-
րացած սպիտակ աղջիկներ, թե-
ւերնին վեր երկարում, կարծես
ահա թռչելու էին արեւներ վար
բերելու:

Տղաներ գնում աղջիկների
լողափ, միջօրէի ուտելիք էր աւա-
զի վրայ փռուած ծածկոցներին,
հսկիչ Քրիշտեան հրամայում
նստել: Տղաներ աշխատում նստել
այնտեղ, որ իր դիմացը կը լինէր
«նա», թաքուն նայէր նրան,
ընկնէր պատանեկան երազի բո-
վեր, իրենց մանչերի հետ սեղան
նստած ծիծաղով ճաշում ... իրեն
էին նայել, ամաչել էր, հացն էր
ձեռքից ընկել, նայել նրա դէմքի
ժպիտին, ինքն էլ էր ժպտացել ...:
Վերադարձել էին իրենց լողափ,
նորէն վայելելու ծովի տաքուկ
ջրի հեշտանքը:

Արեւը սկսել էր իր ուղիի
երթը դէպի արեւմուտք թեքել,
օրը սկսել էր պաղել, հսկիչ Քրիշտե-
ան կարգադրել էր Մակարավանք
ետ դարձի պատրաստուել: Յոգ-
նա՞ծ էին, է՛հ... նոյն հրճուանքով
վերադառնում էին Մակարավանք:
Այդ օրը շուտ էին քնել, ով
իմանայ ինչ անուշ երազներ էին
տեսել ...:



Legacy Realty
Nick Karasarkisian
Broker - CalBRE # 01022153
2275 Huntington Dr., #117
San Marino, CA 91108
Phone: 213.706.9990
e-mail: nickkarasarkisian@gmail.com
www.legacyrealtyca.com




ՎԱՃԱՌԻՈՒՄ Է
գերեզմանի հողատարածք
Forest Lawn կարմիր եկեղեցու բակում
Արժէքի համար կարող էք զանգել
Մաթթին 818-484-0000

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շարաքաթերթին


VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles



- Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝
- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք
վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել
Հեռաձայնելով՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու
Տպագրութեան
եւ Հին Գիրքերու
Նորոգութեան

Vahe Atchabahian
2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ՄԱՐԶԱԿԱՆ

«Լիւերպոլ»-ն իր Պատմութեան Մէջ 6-րդ Անգամ Դարձաւ Ախոյեանների Լիգայի Յաղթող



Մադրիդի «Վանդա Մետրոպոլիտանո» մարզադաշտում կայացաւ Ախոյեանների լիգայի եզրափակչի «Տոտենհեմ»-«Լիւերպոլ» հանդիպումը:

Խաղի մեկնարկից ընդամենը 25 վայրկեան անց մրցավարը 11-մեթրանոց նշանակեց լոնտոնցիների դարպասին. գնդակին մօտեցաւ Մոհամեդ Սալահը եւ վստահ հարուածով առաջ մղեց իր թիմին: Խաղավերջում իր թիմի առաւելութիւնը կրկնապատկեց Դիմոկ Օրիջին:

Այսպիսով, Եուրօպէս Կոպի թիմը դառնում է Եւրոպայի ամենահեղինակաւոր մրցաշարի յաղթող՝ իր պատմութեան մէջ 6-րդ անգամ:

«Չելսիի» Յաղթանակի Շնորհիւ «Լիոնը» Նուաճեց Ախոյեանների Լիգայի Խմբային Փուլի Ուղեգիր



Եւրոպայի լիգայի եզրափակչում Լոնտոնի «Չելսիի» յաղթանակն «Արսենալի» նկատմամբ ֆրանսական «Լիոնին» հնարաւորութիւն է տուել յաջորդ մրցաշրջանում խաղալ Ախոյեանների լիգայի խմբային փուլում, յայտնում է ՈւԵՖԱ-ի կայքը:

Ֆրանսական ակումբը Ախոյեանների լիգայում պայքարը պէտք է սկսեր որակաւորման փուլից, սակայն «Չելսին» այդպիսի ուղեգիր արդէն նուաճել է Պրեմիեր լիգայից: Ախոյեանների լիգայի խմբային փուլի ուղեգիր նուաճում է նաեւ Եւրոպայի լիգայի յաղթողը:

Ախոյեանների լիգայի որակաւորման փուլի փլէյ-օֆֆում «Լիոնին» կը փոխարինի թուրքական «Խատանբուլ Բաշակչէհիրը»:

Յիշեցնենք, որ Պաբլոն կայացած եզրափակչում «Չելսին» յաղթել էր 4:1 հաշուով եւ երկրորդ անգամ դարձել Եւրոպայի լիգայի գաւաթակիր:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն «Արսենալի» հետ չէր մեկնել Ատրպէյճանի մայրաքաղաք:

Forbes-ը Հրապարակել է Աշխարհի Ամենաթանկարժէք Ֆուտպոլային Ակումբների Ցանկը

Forbes ամսագիրը հրապարակել է ֆուտպոլային ամենաթանկարժէք ակումբների ցանկը: Յատկանշական է, որ Լոնտոնի «Չելսի»-ն Եւրոպա Լիգան յաղթելուց յետոյ միանգամից բարձրացել է 6-րդ հորիզոնական: Նշենք, որ 2 տարուայ ընդմիջումից յետոյ ցուցակը կրկին գլխաւորում է Մադրիդի «Ռեալ»-ը:

1. «Ռեալ» - \$4,24 միլիարդ
2. «Բարսելոնա» - \$4,02 միլիարդ
3. «Մանչեսթեր Եունայթեդ» - \$3,81 միլիարդ
4. «Բաւարիա» - \$3,02 միլիարդ
5. «Մանչեսթեր Սիթի» - \$2,69 միլիարդ
6. «Չելսի» - \$2,58 միլիարդ
7. «Արսենալ» - \$2,27 միլիարդ
8. «Լիւերպոլ» - \$2,18 միլիարդ
9. «Տոտենհեմ» - \$1,62 միլիարդ
10. «Եուվելթոն» - \$1,51 միլիարդ
11. ՊՍԺ - \$1,09 միլիարդ
12. «Ատլետիկո Մադրիդ» - \$953 միլիոն

Հայաստանի Ս19 Հաւաքականը Յայտնուել է «Մահուան Խմբում»



«Արմենիա Մարիթ» հիւրանոցում կայացաւ ֆուտպոլի Եւրոպայի Ս19 առաջնութեան եզրափակչի վիճակահանութիւնը: Ութ հաւաքականներին երկու խմբերում բաշխեցին Հայաստանի ազգային հաւաքականի անդամներ Հենրիխ Մխիթարեանն ու Մարկոս Պիզելին: Նրանց թեթեւ ձեռքով էլ Հայաստանը յայտնուեց, այսպէս կոչուած, «մահուան խմբում», որտեղ մեր թիմի մրցակիցները յաղթողի հիմնական հաւակնորդներն են: Խմբերն այսպիսի տեսք ստացան.

«A» խումբ. Հայաստան, Պորտուգալիա, Իտալիա, Սպանիա:
«B» խումբ. Չեխիա, Իռլանդիա, Նորվեգիա, Ֆրանսա:
Եւրոպայի առաջնութիւնը Երեւանում մեկնարկելու է Յուլիսի 14-ին:

«Արարատ-Արմենիան»՝ Հայաստանի Ֆուտպոլի 2019թ Ախոյեան

Աւարտուեց Հայաստանի ֆուտպոլի բարձրագոյն խմբի առաջնութիւնը:

Երեւանի «Արարատ-Արմենիան» վերջին խաղում 1:0 հաշուով յաղթելով «Բանանցին», վաստակեց 61 միաւոր եւ առաջ անցաւ առաջատար «Փիւնիկից»: Միակ գոլը 11մ հարուածով խփեց փիւնիկցիների լաւագոյն ումբարկու Անտոն Կոբջակոն:



Այդպիսով, մէկուկէս տարուայ պատմութիւն ունեցող «Արարատ-Արմենիան» առաջին անգամ հռչակուեց Հայաստանի ախոյեան: Մրցանակային 2-րդ տեղը զբաղեցրեց «Փիւնիկը», 3-րդ՝ «Բանանցը»: Անցած տարուայ ախոյեան «Ալաշկերտն» այս տուրում 1:3 հաշուով պարտուեց «Լոռիին» եւ ձեռքից բաց թողեց պրոնոզէ մետալներ նուաճելու լաւ հնարաւորութիւնը:

«Արարատ-Արմենիան» գալիք մրցաշրջանում հանդէս կը գայ ՌԻԵՖԱ-ի ախոյեանների լիգայի որակաւորման փուլում, իսկ «Փիւնիկը», «Բանանցը» եւ «Ալաշկերտը» կը խաղան Եւրոպայի լիգայի նախնական փուլում:

Ստեփանակերտում Բացուեց CONIFA Ֆուտպոլի Եւրոպայի Առաջնութիւնը



Յունիսի 1-ին Արցախի Հանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտում հանդիսաւոր կերպով բացուեց CONIFA Ֆուտպոլի Եւրոպայի առաջնութիւնը: Մարզադաշտում հանդիսաւոր երթով անցան բոլոր մասնակից թիմերը: Պաշտօնական բացման խօսքով հանդէս եկան Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանը, CONIFA-ի նախագահ Պեր-Անդրեա Բիլդը: Պաշտօնական հատուածից յետոյ մարզադաշտը վերածուեց համերգասրահի, որտեղ Հայաստանի, Արցախի աստղերը տպաւորիչ շուռ ներկայացրին: Յատուկ հիւր էր հանրայայտ Մանուշ Զիփսին, որն սպանական ութմետրով վարակեց հանդիսատեսին: Երեկոն աւարտուեց շքեղ հրավառութեամբ եւ Արթուր Գրիգորեանի «Արցախ» ստեղծագործութեամբ: